№ 10 (141) XIII ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԿԱՐՍԻ ԴԻՆԱՄԻՏԱՅԻՆ ՊԱՅԹՈՒՄԻ ԶՈՀԵՐԸ

ԻՍԱՉԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

ՎԱՐԴԱՆ ՏՕՆՈՑԵԱՆՑ

ՊՕՂՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԻԿԵԱՆ

ՌՕԲՕՍՏՕՑԻ ՍԱՐԳԻՍ

ԴԻՆԱՄԻՏԻ ԶՈՀԵՐԸ

Ուշագրա՛ւ հաւաքածու...

Հայրենիքի և աշխարհի այնքա՜ն հեռաւոր ծայրերից համախմբուած՝ պարտքի հերոսների այդ զուգադրութիւնը չէ՞ վկայում արդեօք նրանց դաւանած մեծ գաղափարի կայունութիւնը և գալոց անխուսափելի յաղթանակը...

Անա՛րգ պատահար... Որքա՜ն յաճախ դու խեղդել ես խանձարուրի մէջ գաղափարական սիրուն ծրագիրներ, վսեմ յղացումներ:

Հինգ թանկագին նահատակները հանգչում են այժմ սահմանից անդին և ոչ այն երկրում, ուր հողը եռում է տաք աճիւններով, ուսկից վրէժխնդիր, ռազմիկ սերունդը պաղատագին կանչում էր նրանց... Բայց նրանք կը մնան միշտ ազատութեան մեծ նահատակների շարքում.—Նոյն արիւնոտուած, տառապող ժողովուրդը երախտագիտութեամբ ծունկ կը չոքէ նրանց պաշտելի շիրիմների առաջ:

ԱՆԼԵԶՈՒ ՎԻԹԽԱՐԻՆ

Երբ յետ դարձէ առաջին անգամ
Ես Աւագ Մասիս ներսուց որոտամ,
Կանչեմ ու շնչեմ, արծակեմ ծուխ, բոց,
Սասանեցնեմ զԱրարատն հայոց,
Այդ ըլնի նշան հայոց աշխարհին,
Թէ գայ ժամանակ, որ գան փառքն այլ հին:

ԱԼԻՇԱՆ

Երէկուայ անցքերն ենք յիշում ակամայ, նահապետի այդ սրտառուչ տողերը կարդալիս...

Մասիսն էլ որոտաց, Արարատեան դաշտն էլ եկաւ ձայնակցելու սահմանի միւս կողմի, Մեծ ու Փոքր Հայքի պարբերական ժայթքումներին և ստեղծելու մէկ ա մ բ ո ղ ջ ա կ ա ն, ներդաշնակ շարժում՝ մէկ ամբողջական հայրենիքի տենչով...

Մասիսն էլ որոտաց, կամենալով ցոյց տալ իր շուրջը վխտացող մանր ու խոշոր բռնակալներին, որ հայի աստղը դեռ փայլում է երկնակամարի վրայ, որ հայութիւնը, պատմութեան այդ մեծ, արիւնոտ զոհը, իբրև մի ուրոյն կուլտուրական միութիւն, սպառազինուած քաղաքացիական ու ռազմական ձիրքերով՝ իր տեղն ունի արեգակի տակ:

Հայոց Արարատը երկար համբերեց: Իր կրծքին զարնուող հողմերի ու փոթորիկների դիմաց նա սովորել էր դարերի ընթացքում լինել համակերպող. բայց նա ցոյց է տուել, որ գերագոյն վտանգի րոպէին գիտէ և բարկութեան շանթեր արձակել... Այդպէս էր երէկ: Արարատեան գաւառները „սասանեցին" և անդիմադրելի, տարերային ուժով քաշեցին իրենց ետևից ամբողջ Ռուսահայաստանը:

Հայ ժողովուրդը, այդ անլեզու վիթխարին, այդ կարծեցեալ ստրուկը, որ երկար ժամանակ լուռ ու անվրդով մարսում էր երկգլխեան արծուի հայաջինջ դաւերը, իր խորունկ ծալքերում անշէջ պահպանում էր սրբազան կրակը, նման իր պաշտած աւագ Մասիսին, որ թէև դրսից մշտապէս ձիւնապատ՝ ներսում շարունակ մթերում է հրահեղուկ զանգուածը, մթերում է դուրս ժայթքելու համար...

Ո՞վ է արդեօք թօթափել իրենից երէկուայ հոյակապ անցքերի հմայքը... Ո՞վ արդեօք հպարտութեամբ չէ մտաբերում այդ եզակի օրերը, երբ խոնարհութեան, հնազանդութեան վարժուած հպատակները վեր էին բարձրացնում ժամանակիս ամենահզօր Բռնաւորի ձեռնոցը, երբ Արարատեան գիւղերից ու քաղաքներից հայկական զինուած կամաւորները անվախ վազում էին թշնամու հանդէպ, երբ տասնեակ հազար Երևանցիների կոչն էր որոտում՝ „դէպի Էջմիածի՛ն" և բիւրաւոր արձագանքներով գնում կորչում էր Մասսի անդունդներում...

Հրաբխի ժայթքումն էր այդ—ո՞ւր ես նահապետ...

Այն նուիրական վայրերում, ուր խաղացել է հայի պատմական ճակատագիրը, ուր ամփոփուած են նախնիքների սրբագործուած նշխարների հետ՝ հինաւուրց փառքի յուզիչ բեկորները և սև օրերի տխուր յուշերը,—այնտեղ, այն վայրերում՝ հայ ժողովրդական ցասումը ռուս բռնապետութեան սադրանքների դէմ՝ եղաւ ամենից աւելի ուժեղը և ամենից աւելի հոյակապը:

Ինչպէս մինչև այն լուռ ու անհրապոյր էր Արարատեան դաշտը... Մասիսը կարծես խռովել էր. իր վեհապանծ գագաթը ասես բարկութեամբ դարձրել էր հարազատ զաւակներից և այլևս տրամադիր չէր ձայնակցել Աւարայրի բլբուլի երգչին՝

Ահա շարժեցան դաշտք Արարատայ,
Դուք այլ շարժեցէք մանկունք Հայկայ...

Եւ Մասիսը զուր չէր խոժոռել ճակատը. նա տեսնում էր ապիկարութեան նողկալի փաստեր իր հարազատների մէջ... Նա տեսնում էր, իրենից ոչ հեռու, Անդրկովկասի շէն կենտրոններում, ուր հայ տարրը մտաւոր, կուլտուրական առաջնութիւն է վաստակել, հայոց „բարձր հասարակութիւնը"՝ հայրենիքի աղը, ազգային ճակատագրի ղեկավարողը՝ յօժարակամ բռնել էր ռ ո ւ ս ա ց մ ա ն ճանապարհը... Այլասերումը կատարւում էր ընդարձակ չափերով, մի բիրտ ու գռեհիկ կ օ ս մ օ պ օ լ ի տ ի զ մ ճարակում էր հայ „կրթուած" շրջանները և ամէն ինչ մատնւում էր անարգ մոռացութեան:

Հարկաւոր էր մի շանթ, ազդարարող մի զօղանջ: Հայ ժողովուրդն էր, որ բռնութեան նոր հարուածի լուրն առնելուն պէս՝ հնչեցրեց այդ զօղանջը Մասսի ստորոտից: Մոլեգնութեամբ նա հրապարակ նետուեց և կոզակների սուիններին դիմաց բարձրաձայն շեշտեց իր հաւաքական, ազգային իրաւունքները: Եւ շարժման ալիքը տարածուեց Արարատեան դաշտն ի վայր, գրկեց հեռաւոր հորիզոններ, անցաւ Կովկասեան լեռնաշղթան, հասաւ

մինչև խոշոր արդիւնաբերական կենտրոնները, քարշելով իր ետևից և՛ հայ հասարակութիւնը, և՛ հայ կղերը և՛ հայ ինտելիգենցիան։

Որպիսի՜ իդէալիզմ մերկ ու անկիրթ մասսայի մէջ…

Եղել են համաշխարհային պատմութեան ընթացքում բազմաթիւ մոմենտներ, երբ գաղափարական կռուի արծարծողը և առաջապահը կազմել է պարզ, համեստ մահկանացուներից բաղկացած այն անլեզու մասսան, որը սովորական, նորմալ ժամանակ լուռ ու մունջ է մնում, հեռու փրազներից ու յաւակնութիւններից և որի վրայ այնքան բարձրից է նայում մտաւորական տարրը։

Այդ մոմենտներից մէկն էլ ահա կրկնեց մեր կեանքում,—հայ ժողովուրդը վերջին անցքերի միջոցին տուեց իդէալիզմի և անձնուիրութեան փայլուն ապացոյցներ։ Այդ անցքերը պարզ վկայեցին, որ ապականութեան, այլասերման ախտը արմատ է ձգել մեր ազգային օրգանիզմի գ լ խ ի մէջ միայն, այն ինչ ս ի ր տ ը մնում է առողջ և անապական։ Հայ մասսան համարձակ թռիչքներով սովորեցրեց հայ հասարակութեան, թէ ինչպէս պաշտպանել ազգային ոտնահարուած իրաւունքները։

Եւ նա կը շարունակէ սկսած պայքարը, մշտապէս խռովելով օպպորտունիստների և բոլոր խոհեմների նըրբացած ջղերը…

Յենուած իր առողջ բնազդումների վրայ, թելադրուած հայրենիքի վեհ պաշտամունքից, հրահանգուած այն բնատուր իդէալիզմից, որով տոգորուած է նա ժառանգաբար, դարերից ի վեր,—հայ ընդհանրութիւնը կը շարունակէ բարձր պահել ազգայնութեան դրօշը և բռնապետութեան ոտնձգութիւններին կը պատասխանէ միշտ համաձայն „ակն ընդ ական“-ի տիեզերական օրէնքին… Երբէք վհատութիւն և երբէք զինադադար։ Կովկասեան հայութիւնը արդէն ցոյց տուեց մի շարք փայլուն իրողութիւններով, որ շատ էլ բարեկամ չէ կռուի այն ծոյլ, անկարող մեթոդին, այսպէս անուանուած կ ր ա ւ ո ր ա կ ա ն դ ի մ ա դ ր ո ւ թ ե ա ն, որ ծաղկում է ուրիշ տեղերում և որ հանգցնելով յեղափոխական խանդավառութիւնը, խրախուսում է միայն բռնաւորներին և յետաձգում կռուի յաղթանակը հեռու, մշուշապատ ապագային…

Հայը ապացուցեց, որ նոյնիսկ ամենազօր բռնութեան ճանկերում՝ կարելի է ո ւ ժ ո վ դիմադրել ուժին։ Եւ նա այդ տաքտիկով յարգանք ներշնչեց օտարների մէջ… Բուն մարտական յեղափոխական Ռուսաստանը հիացմունք զգաց, դիտելով անդրկովկասեան հսկայի մէջ թագնուած ուժերի ժայթքումները և չգլացաւ իր ամենաջերմ ու անկեղծ ներբողները հայ կռւողների վճռականութեանն ու հերոսութեանը։ Ութսուն տարւայ յեղափոխական անցեալ ունեցող և միենոյն մարդասպան ռէժիմի դէմ կռւող Ռուսաստանի լաւագոյն տարրերի այդ ներբողները նոր խրախոյս կը լինեն ռուսահայ ժողովրդին, նոր թափ կը հաղորդեն նրա ըմբոստութեան…

Յառա՜ջ. հրահեղուկ զանգուածը եռում, փրփրում է Մասիսի արգանդում. անլեզու վիթխարին դեռ ևս չէ ասել իր վերջին խօսքը… Նա դեռ կ՚երերայ և իդէալիզմի բարձր թռիչքներով կը ջերմացնէ հայկական մըթնոլորտը. Նա կ՚արագացնէ կռուի սլացքը, լաւ գիտակցելով՝ որ իր սեփական բազուկներով միայն պիտի փորփորէ կովկասեան Հայաստանում խարխիսները այն վայրենի բռնապետութեան, որը մղձաւանջի պէս ծանրացած է հայութեան բոլոր հատուածների վրայ։

…Այդ ըլնի նշան հայոց աշխարհին,
Թէ գայ ժամանակ, որ գան փառքն այլ հին…

Չենք ուզում հին փառքը։ Ժամանակները առաջադիմել են և փառքի հասկացողութիւնն էլ յեղաշրջւել է։ Եթէ այսօր հայութեան երդուեալ թշնամիները Ռուսաստանում և Եւրոպայում, հրապարակով, մամուլի էջերում յիշոցներ են ուղղում հայկական շարժման, մեղադրելով այն՝ հայոց թագաւորութիւնը վերականգնելու տղայամիտ ցնորքների մէջ,—դա նրանց գործն է և մենք չենք նախանձում նրանց։ Հայ կռւող ժողովուրդը հեռու է ուտոպիայից, բանդագուշանքներից։ Դարերով ստրկացրուած, դարերով զրկուած մարդկային տարրական իրաւունքներից՝ նա կարող է միայն մէկ տենչ ունենալ, որ նուիրական է բոլոր ազգերի համար,—ապրել ազատօրէն իր նախնիքների արիւնով ցօղուած հայրենիքի մէջ, զարգացնել իր ինքնատիպ կերպարանքը, իր ցեղական առանձնայատկութիւնները և ձեռք ձեռքի տուած հարևան ազգերի հետ, իբրև մի ինքնուրոյն անդամ նրանց շարքի մէջ, իբրև մէկ անդամ համամարդկային մեծ գերդաստանի. ձգտել դէպի բարձր կերպեր հասարակական կենցաղի, ուր բազմատանջ երկոտանին անդուլ թափառումներից ու խարխափումներից յետոյ՝ կը գտնէ վերջապէս մաքսիմումը—ծայրագոյն աստիճանը—ազատութեան և բարօրութեան։

ՄԵՐ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Ժամ է օրհասի, հեռուն ըշտապով
Զանգերն օգնութեան կանչեն ամէն ոք,
Դուռըս կը ծեծեն հըրացաններով,
Մեռցընել-մեռնիլ ալ ո՞վ կ՚ընէ հոգ:
(Ազատամբութիւնը) ԷՄԻԼ ՎԷՐՀԱՐԸՆ

Աչերնիդ պղտո՛ր, շըրթերնիդ կարմի՛ր,
Խանձուած մազերնիդ մըրըրկին տուած,
Որո՞ւն կ՚աղօթէք ցաւատանջ մայրք մեր,
Մի՞թէ դեռ կ՚ապրի հայու կո՛յր Աստուած !

Ալ վերջ Աղօթքին, խունկին ու խաչին.
Սուգի, Արիւնի այս օրը օրերուն,
Ձեր շըրթները թո՛ղ տարփանքով փակչին
Աստուածաանարգ Պողպատին փայլուն։

Աղաղակեցէք ձեր զաւկըներուն
Թէ — „Աստուածն հայու մըտաւ հողը գոգ
„Ահա ձեզ կապար ու Պողպատ շողուն
„Մեռցընել-մեռնիլ! ալ մի ընէք հոգ“։—

ՎՏԱՐԱՆԴԻ

ՄՈՒՇ—ՍԱՍՈՒՆ

Եւրոպական թերթերը վերջերս Կ. Պոլսից հաղորդեցին մի կարևոր լուր հետևեալ բովանդակութեամբ.

„Սասունում երևացել է Անդրանիկը իր բազմաթիւ մարդկանցով. տեղւոյն գայմագամը փախել է իր ամբողջ պահակախմբով։ Զորրորդ զօրաբանակի հրամանատար Զէքի փաշան Տէֆիկ փաշայի հետ միասին մեկնել է դէպի Մուշ"։

Շնախատեսելով կատաբելիք եղեռնական դէպքերը Մշոյ և Սասնոյ շրջանում, մենք օգտակար ենք գտնում բերել այստեղ մեր ընկերներից ստացած նամակներից և տեղեկագիրներից մի քանի քաղուածքներ, որոնք որոշ չափով լոյս են սփռում իրերի կացութեան վրայ այդ շրջանում։

Սասուն, 26 Նոյեմբեր 1903

Անցած ամառուայ յունիս-յուլիս ամիսներուն կառավարութիւնը բանակ դրեց Գէլիէ-Կուզանի մօտերը։ Ամէն կողմէ լուրեր կը հասնէին մեզի որ քրդերը գրգռուած՝ նախայարձակ պիտի լինին տեղիս ազգաբնակութեան և կազմակերպուած պաշտպանողական խումբերուն վրայ։ Կռուի առիթ չտալու և տխուր անցեալի կրկնողութիւնը չտեսնելու համար՝ որոշուեց պաշտպանուել և ադոր համար բարձրանալ լեռները, գրաւել յարմար դիրքեր Գէբինի ու Անդոքի վրաները։ Հոս փոխադրուեցան ռազմական և ուտեստի պաշար։ Զէնք ունեցողներու մեծ մասը բաժանուեց խումբերու և սկսեցին դիրքեր յարմարցնել կռուի համար։ Գոբրէ Շէրիֆ խան *) նշանակուեց իբրև առաջապահ՝ հսկելու և պահելու Անտոքի ճանապարհը։ Բոլոր ժողովուրդը իր ինչքերը բերաւ դրեց այդ սարերու ստորոտները։ Թէ զինուածներ և թէ անզէններ կազմ ու պատրաստ էին։ Ալ ծածուկ բան չկար։ Յեղափոխութեան կարմիր դրօշը կը ծածանուէր Անտոքի վրայ։ Երկու ոսերիմ բանակներ, որ միայն երկու ժամուայ տարածութեամբ կը բաժանուէին իրարմէ, առուընէ մինչև երեկոյ զիրար կը դիտէին։

Տեսնելով որ մեր քաջերը անվեհեր կերպով պատրաստ են դիմադրելու, ամէն կողմէ թէ հայ, թէ թիւրք և թէ քիւրդ աչքերնին դարձուցած էին դէպի սարերը և օրէցօր կըսպասէին ամպրոպի պայթելուն...

Յուլիսին, քրդերը և մի քանի ծպտեալ ոստիկաններ երկու անգամ ուխտի պատրուակով եկան Անտոք, հայերի գրաւած դագաթի հանդիպակաց գագաթը. եկան, հրացաններ պարպեցին, բայց տեսնելով մերոնց արհամարհոտ վերաբերումը, վախցան առաջ գալ և յետ դարձան...

Օգոստոսին, հակառակ առջի օրերուն յուզումներուն ու տարածուած լուրերուն, ինչպէս նաև Բաղէշի կուսակալին Մուշ հասնելուն ու հոն մնալուն—թէ կառավարութիւնը և թէ քրդեր հանդարտ մնացին։ Անգամ մը գօրքերուն հրամանատարը ուզեց զօրքերով գալ և այցելել ալիանցոց շինած նոր մատուռը, բայց անոնք չ'ընդունելով՝ ետ կեցաւ։ Ուրիշ անգամ մը բագրանցի քրդեր ջուրի պատճառով վէճ ունեցան սեմալցոց հետ, վերջիններս հրացանաձգութեամբ յետ մղեցին զանոնք և քրդերը չհամարձակեցան առաջ գալ։ Օգոստոսի վերջերը Գուռդքի վրայ բնակող քէօչերը մեկնեցան գացին։ Ադոր հետ միասին յանկարծ լուր եկաւ այլևայլ տեղերէ, թէ կառավարութիւնը կը պատրաստուի գրաւել Շէնիք-Սեմալ, կէլին և քեղաբը. . . . . Թշնամին առանց կռուի կը մտածէր յաղթանակել։ Անտոքի և Գէբինի վրայ ցուրտը սկսած էր։ Ջուրի և վառելիքի պակասութիւն կար։ Ժողովուրդը կը նեղուէր։ Եթէ գիւղերը գրավէին կարելի չէր դուրսը երկարատև կռիւ մղել ու դիմանալ։ Խորհուրդ գումարուեց և որոշուեցաւ լեցուիլ գիւղերը։ Այդ որոշումը անմիջապէս գործադրուեցաւ։ Աւելի մօտեցանք բանակին։

Այդ օրերուն մեր տղայք ձերբակալեցին երկու ոստիկաններ, մէկը քիւրդ, միւսը հայ։ Քիւրդը ազատ արձակուեցաւ և այդ հանգամանքը թողեց թշնամու վրայ մեծ տպաւորութիւն, աւելի ևս բարձրացուց մերոնց վարկը։

... Սեպտեմբերի կիսուն բանակն ալ մեկնեցաւ և քիչ վերջը կառավարութիւնը Ցաբկայ մէջ իր ունեցած գայմագամը, հաղարապետը և ոստիկաններն առաւ տարաւ Մուշ։ Մշոյ թիւրքերը գրգռուեցան, որ այսպէս կառավարութիւնը Սասունը թողուց ֆէդայիներուն։ Կուսակալը, որ նոր մեկնած էր, նորէն վերադարձաւ Մուշ։ Երկու հեռագիրներ քաշեցին սուլթանին... Քաղաքէն քանի մը ազդեցիկ թիւրքեր հեռացուցին կ. Պոլիս։

Այսօր հայերը բացարձակ տէրն են Սասնոյ, որ գրեթէ անկախ վիճակի մէջ է։ Կառավարութիւնը ոչ տուրք կը հաւաքէ և ոչ ալ տեղւոյս գործերուն կը միջամտէ։ Թէ մօտաւոր և թէ հեռաւոր վայրերուն մէջ աւելի քան երբէք արձագանք գտած է ֆէդայիի հռչակը. առածի կարգ անցած են անոր անվեհեր քաջութիւնը, արդարասիրութիւնը և ուղղամտութիւնը...

Կառավարութիւնն ալ անգործ չի նստեր, լաւ գիտէ, թէ ինչ կ'անցնի ու կը դառնայ։ Ինչպէս կ երևի, չուզեր ներկայիս մէջ աղմուկներ գուրս բերել, բայց իր պատրաստութիւնները կը տեսնէ։ Վերջերս վեց թնդանօթ բերաւ Մուշ։ Կ'ըսուի թէ ուրիշներ ալ պիտի բերէ և Մուշ զինուորական տէսակէտով պիտի բարձրանայ, պիտի ըլլայ կիսաբաժին (ֆրգա)։

Գարնան ընդհարումը անխուսափելի կ'երևայ... Թող հայութիւնը աչքից չթողնէ Սասնոյ առիւծների օրհասական վիճակը...

ՖԱՂԻԱԾՔ

ՄՇՈՑ ԵՒ ՍԱՍՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԵՐՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԷՆ

ՄՇՈՑ ՇՐՋԱՆ	Գիւղեր	Ընտանիք Հայ	Ընտանիք Քիւրդ Տաճիկ
I. Ա. շրջան՝ Ալուառինճ, Խասգիւղ և այլք	30	1723	654
II. Սոխգոմ, Առինճ.	19	1484	68
III. Ցրօնք, Աւրան.	20	1190	123
IV. Ղզլաղաճ, Շէխլան	13	520	63
V. Ջիարէթ, Ղէյպիան. . . .	8	578	68
Մուշ քաղաք	1	1400	3000
ԳՈՒՄԱՐ	93	6895	3976

*) Սասունցոց բարեկամ ապստամբ քիւրդ ցեղապետ մը։

ՍԱՍՆՈՅ ՇՐՋԱՆ	Գիւղեր	Ընտանիք Հայ	Ընտանիք Քիւրդ Տաճիկ
I. Շատախ՝ Շէնիք, Սէվալ Ալն	9	277	9
II. Միջին մաս՝ Կէլիէկուզան Աղբի, Իշխնձոր	3	290	—
III. Ծովասարի փեշերը՝ Հեբինք, Հարկորք	9	113	18
IV. Տալորիկ՝ բուն Տալորիկ, Նըղենք, Սպաղանք . .	9	144	—
ԳՈՒՄԱՐ	32	824	27
ԲՈՒՍԱՆԱՑ ԳԱՒԱՌ			
Մըգեղ, Խնձորիկ Ալն.	16	200	—
Խիանք՝ Պերմ, Փառկա	9	290	25
Խուլը՝ Գեղերվանք, Կասգէ .	7	355	100
ԳՈՒՄԱՐ	32	845	125

Ընդհանուր գումար Մշոյ և Սասնոյ շրջանի՝ 157 գիւղեր (չհաշուած Սասնոյ գիւղերու մանր թաղերը), 8564 հայ և 4128 քիւրդ և այլ մահմէտական ընտանիքներով։

Ի նկատի առնելով ցեղային և կենցաղավարական տարբերութիւնները, ամէն մի տան մէջ միջին թիւով հաշուելու է հայ ընտանիքներու համար 8—9 հոգի, քիւրդ և այլ մահմէտականներու համար 5—6։ Այդ պարագային Մշոյ և Սասնոյ շրջանի ամբողջ ազգաբնակութեան թիւը կը լինի 89,100-էն մինչև 101,800, որից հայ՝ 68,500—77,000, քիւրդ և այլ մահմէտականներ՝ 20,600—24,800։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ՎԱՆԷՆ

I

30 Հոկտեմբեր, 1903

Կեղծիքը, խարդախութիւնը, ներքին դաւերը թիւրքին բնորոշ յատկութիւնները եղած են։

Թունաւորելու փորձ.—Վարդգէսին համար ցկեանս բերդարգելութեան վճիռ արդէն տրուած է. սակայն կառավարութիւնը մտածելով թէ կրնայ պատահել որ ներում գայ և Վարդգէսը ազատի՝ ձեռնարկեց մի այլ դատի. Վարդգէսը ամբաստանեց իբրև մարդասպան մանիչ Խաչիկի սպանման գործին մէջ, մինչդեռ այդ ժամանակ նա բանտն էր և խիստ հսկողութեան տակ։ Ու այժմ կը ջանայ նրան դատապարտել իբրև ոճրագործ, որ եթէ քաղաքական յանցաւորներին ներում շնորհուի, եղեռնականով բանտարկեալ մնայ ալն։

Ասով ալ գոհ չելլած, այժմ բանտապետը, գօմիսէր Հիւսնին և Աթամ պէյը դաւադրութիւն մը սարքած են Վարդգէսին թունաւորելու։ Թրքական նախանձկոտութիւնը չկրնար տանել, որ Վարդգէսի պէս մէկը բանտի մէջ անգամ ապրի։

Հիւպատոսները.—Տեղւոյս օտար հիւպատոսներու ամբողջութիւնը թրքամոլ է, այնպէս որ այսպիսի կրիտիքական պարագաներուն անգամ չենք համարձակիր նրանց դիմել։ Քանի ամիս առաջ մի կռիւ տեղի ունեցաւ բանտում. թիւրքերը յարձակուեր էին հայ բանտարկեալներու վրայ, լաւ մը ծեծեր էին։ Սակայն կառավարութիւնը շղթայեց հայերու ոտն ու ձեռքը, ու խիստ կերպով նեղել սկսեց բանտարկեալները։ Իրողութիւնը պարզող մի գրութեամբ իմացուցինք հիւպատոսներուն, որոնք իբրև ստրկական պարտք մը, կարծես, փութացին մեր գրութիւնը տանել կուսակալին և խոստանալ, որ երկրորդ անգամ կը ձերբակալեն այդ կարգի թուղթ բերող մը։ Սակայն մենք չուզեցինք հաւատալ եղած տարաձայնութեանը, փորձեցինք ֆրանսական տեղապահին, որ կղերական մըն է, Քրիստոսի աշակերտ մը ըստ իր կարծեաց, ղրկել մեր մէկ ընկերոջը ղրկած տեղեկագիրը։ Տանողը հազիւ կրցաւ ձերբակալումէ ազատել և շունչը մեր քովը առնել։

Երկու օր առաջ հասաւ ֆրանսիական հիւպատոսը, բայց դեռ յայտնի չէ, թէ սա ինչ կարգի մարդ դուրս պիտի գայ։

Քրդական կեղծիքը.—Քրդերն ալ յարաբերութեան մէջ մտնելով օսմանցիներու հետ, շուտով իւրացուցին զրպարտութեան ու կեղծիքի քաղաքականութիւնը։ Վանէն 2-3 ժամ հեռաւորութեան վրայ կէս հայ կէս ասորի Դօնիայ անուն գիւղը կայ։ Մի քանի տարի առաջ Նամաթ անուն կեղեքիչ քիւրդ մը կը հաստատուի հոս և օրէօր կ'աւելցնէ իր կեղեքումները։ Վերջերս ասորիները հայերի հետ միացած՝ բողոք կը բառնան և կ'ուզեն կառավարութեան միջոցաւ դուրս քշել այդ անկոչ հիւրը։ Գործը արդէն յաջողելու վրայ էր, ու Նամաթը կը մտածէ աղուէսութեամբ մը խանգարել յաջողութիւնը։

Մի օր քանի մը քիւրդեր լեռ կը ղրկէ ու ինքն ալ քանի մը ընկերներով դուրս կուգայ գիւղէն անոնց հալածելու իբրև ֆէդայիներ։ Հրացանաձգութիւն մըն է որ կըսկսի. գիւղին մէջ գտնուած մի ոստիկան ալ կը փութայ կռուին վայրը ու կարծեցեալ ֆէդայիներէն կը վիրաւորուի ծանրապէս։ Նամաթը կը դիմէ կառավարութեան, կը յայտնէ, թէ գօնիացիները կ'ուզեն զինք գիւղէն դուրս ձգել, որ ազատօրէն ֆէդայիներ տանեն բերեն, թէ վերջերս ինք 140 անձէ բաղկացած մի խումբ է տեսեր և հետերնին կռուի բռնուեր։ Սակայն մի քիչ հարց ու փորձէ ետք, Նամաթը ֆէդայիներու թիւը 25-ի կ'իջեցնէ, որով կառավարութիւնը կը կասկածի քրդու ճշմարտախօսութեանը և վիրաւոր զինուորը քննութեան կ'առնէ, որը կը յայտնէ, թէ ինք միայն չորս ձիաւոր քիւրդ է տեսեր, որոնց գնդակէն ալ վիրաւորուեր է։ Նամաթ նեղն ինկած՝ ի յայտ կը բերէ մի ժանգոտ մօսինի, որ իբր թէ ֆէդայիներից է խլեր։ Կառավարութիւնը ժանգոտած մօսինը տեսնելուն՝ կը վռնտէ Նամաթին ասելով. „Ֆէդային այդպիսի փճացած ապրանք ձեռք չ'առնիր"։

Սակայն ասով չի փակուիր խնդիրը. գօմիսէր Հիւսնին միշտ հեռագիր կուտայ Պոլիս ու կը պնդէ, թէ տեսնուողները ֆէդայիներ են. ասոր նպատակն է Վանը ներկայացնել մի յեղափոխական կեդրոն և փութացնել ջարդ մը։

II

1 դեկտեմբեր, 1903

Գաւառներից ստացուած նամակների մէջ անթիւ, անհամար անգամ արձանագրուած կեղեքումներից, բռնաբարութիւններից և աւազակութիւններից զատ՝ շեշտւում է կառավարական և քրդական պատրաստութիւնների վրայ։ Վերջերս հռչակաւոր աւազակ Սայիդ-Ալին մեծ թիւով

քրդեր է հաւաքել Խիզան. ինչ որ խլրտում է նկատւում։ Մշոյ և Սասունի մէջ վխտում են զօրքերի և համիդիէների բանակներ։ Մշոյ զօրքերի հրամանատարը, Լիվան, իբր պատրաստւել է անցեալ հոկտեմբերին յարձակում գործել լեռնային գաւառների վրայ, բայց կուսակալը արգիլել է, ցոյց տալով սուլթանէն եկած մի հրամանագիր, որով հրամայւում էր պաշտպանել հպատակ քրիստոնեաներին, որովհետև մեծ պետութեանց պաշտպանութիւնը դրական ձևով է արտայայտելու այժմ... Կողոպուտի, սպանութեան ու քաջութեան երգներով վառւած համիդիէները դժգոհ այդ արգելքից՝ ասում են. „Լսել ենք, որ փատիշահն էլ ֆէդայի է դարձել. ոչինչ, թող դառնայ, մենք էլ մերը կ'անենք, տեսնենք փատիշահը ինչպէս պիտի արգելի“։ Թշւա՜ռ ու վայրագ ժողովուրդ, որ արիւնարբու սուլթանին անգամ ֆէդայի է դարձնում... Ճշմարտութեան որոշ բաժինը կայ այդ լուրերի մէջ, որովհետև Խիզանայ Կէծան գիւղի Մուսա բէյն էլ, որ Հաջ էր գնացել, այս օրերս վերադարձաւ և եռանդով նոր համիդիէ գնդեր է կազմում... Կամայականութիւններին վերջ չկայ։

Հոկտ. 13-ին Անիի գիւղէն 2 ճիւղ ոչխար քշել տարել է քիւրդ հեծելազօրքը։ Նոյն միջոցներին Մանազկերտի մէջ եղած զօրքերը բռնաբարած են նոյն տեղի Մօլլա Իւսուֆի տղան։ Մօլլան կատաղած՝ բնիկ թիւրք, քիւրդ և հայ բնակիչների հետ մի բողոքագիր են ներկայացնում գայմագամին, խնդրելով որ զօրքը հեռանայ քաղաքից։ Գայմագամը տեսնելով, որ իր դրութիւնն էլ պիտի ծանրանայ, դիմում է խորամանկութեան, նա ձգտում է բաժանել բողոքող մահմէտականներին հայերից։ Իրիկունը կը հրամայւի զօրքերին պտտել թաղեր, իսկ պահնորդներին գոռգոռալ ու հրացան պարպել։ Պահնորդների հրացաններին կը պատասխանեն զօրքերը։ Ժողովուրդը շփոթւած, զինւած ու անզէն կը թափւի փողոց. դէս-դէն „ի՞նչ է, ի՞նչ է եղել“ հարցուցներին կը պատասխանեն թէ յեղափոխականներ յարձակւել են բերդի վրայ։ Ճիչ, վայնասուն, հեռագիրներ և հետևեալ առաւօտը կը պարզւին կառավարութեան գործակալների մեքենայութիւնները։ Սրանք տրագիկոմեդիայի նմուշներ են, արժանի արձանագրւելու օսմանեան ապագայ պատմութեան մէջ։

Սեպտ. 20-ին ճանպէզար ասւած 31 հոգի հեծելազօր, մշեցի Հաճի Ալահվերտիի հրամանատարութեան տակ մտնում են Զրագիւղ. պատահած գիւղացի անցորդներին ծեծի-ջարդի տակ են առնում, ձիերը կապում են, յարձակւում գիւղացոց գարու ջվալների վրայ և 26 կօտ գարի սփռում են ձիերի առաջ, յետոյ ընկնում են գիւղ, որսում են 46 հաւ, մորթում են խոյ ու ոչխար և խնջոյք են սարքում։ Դրանք 2-3 օրւայ մէջ կատարւած թրքական քաջագործութիւններն են, ապա ի՞նչ է կրել հայ թշւառ ժողովուրդը ամիսների և երկար տարիների ընթացքում... Հարկերի հաւաքման և նրանց տեսակների մասին կը գրեմ մի այլ անգամ։

Ցեղափոխութիւնը այսօր մեծ հեղինակութիւն է վաստակել օտար տարրերի մէջ։ Տաճիկ թէ քիւրդ մտածում են, որ ներկայ տաճկական տիրապետութիւնը ժամանակաւոր է, որ երկիրը մերը պիտի լինի։ Քիւրդերն ու տաճիկները, որոնք առաջներում անվախ, լրբութեամբ իրենց քէֆն ուզածը գործադրում էին — գողութիւն, սպանութիւն, բռնաբարում ևն — այժմ շատ զգուշութեամբ են կատարում և կատարելուց յետոյ էլ քունը աչքներից փախչում է. ֆէդայու գնդակն ու դաշոյնը մղձաւանջի պէս հետևում են նրանց։ Տաճիկներից շատերը, որ առաջ իրենք իրենց երկրի իսկական ժառանգներն էին համարում, այսօր իրենց կալւածները թողնում են ամայի ու աւերակ, ասելով թէ, „ինչո՞ւ շինենք, քանի որ վերջը գեավուրներին պիտի մնայ“։ Մի քանի տեղեր միայն, ուր օտար տարրը տիրապետող է, սաստիկ նեղւում են, շնորհիւ տնտեսական անկարողութեան. օրինակ, Արճէշ, որ մի քանի հազար բնակիչ ունեցող գիւղաքաղաք է, մեծ մասամբ բնակւած է տաճիկ և քիւրդ ժողովրդով։ 96-ի կոտորածի օրերը նա աւելի քան ուրիշ տեղերը, սոսկալի աւերմունքի ենթարկւեց, շնորհիւ տիրող մահմէտական տարրի, երկրի դիրքի և հայ ժողովրդի անզէն լինելուն։ Տաճիկները և քրդերը հիմովին կողոպուտի և աւերման ենթարկելով հայերի հարստութիւնը, այժմ իրենց ձեռքն են առել նրանց իսկ աշխատութեամբ գաւառի առևտուրը, և բազմաթիւ տաճիկ դրամատէրերը վաշխառութեան միջոցով շատերին գաղթեցրել են ու ոչնչացրել։ Անցեալում ձեռք բերւած աւարը նրանց մի ուրիշ խելք է թելադրել։ Տեղացի հայերը այժմ հազիւ իրենց օրական պարէնն են ձեռք բերում։ Տաճիկները (մեծ մասամբ հայերի տնկեցներ), որոնցից գրեթէ իւրաքանչիւրի ձեռքը կայ մի քանի տասնեակ ոսկիներ՝ լեցւած „գթասրտութեամբ և բարեկամական քնքոյշ զգացումներով“, ամէն մի յարմար առիթով ուրախ պատրաստականութեամբ առաջարկում են հայերին ընկերանալ իրենց հետ, առևտուրի և արհեստի մէջ. „փողը ես կը տամ գործը դու արա՛, ախպէր“։ Շատ թիւրքեր այժմ օրթաղ են հայերի հետ վաճառականութեան և արհեստների մէջ։ Բայց դա ի՞նչ պ օ լ ի տ ի կ ա է... որովհետև իրենք ընդունակ չեն ոչ առևտուրի և ոչ արհեստի, ընկերացնում են հայերին ժ ա մ ա ն ա կ ա ւ ո ր ա պ է ս, մինչև նորից, ալլահի շնորհիւ, մի կոտորած կը լինի, որով ոտքի կանգնեցրած, ընդարձակած առևտրական տունը կամ խանութը ամբողջապէս կը մնայ կրկին իրեն։ Այդքանը առևտրական հողի վրայ։ Նոյն պօլիտիկան են բանեցնում թիւրքերը նաև հայերի տների վերաբերմամբ։ Նրանք առատօրէն վճարում են հայերի տների վարձը. նրանք միշտ հակւած են մեծ, ամուր ու երկյարկանի տներ ունենալ, բայց հայերը լաւ են հասկացել և ըստ կարելւոյն մերժում են նրանց, եթէ մինչև իսկ ամբողջ տունը դատարկ մնալու լինի։ Այն ինչ առևտուրը ընկերութեամբ ստիպւած են շատերը ընդունել, որովհետև ապրել պէտք է և չկայ դրամ, մինչդեռ հարկաւոր է դրամագլուխ։ Արճէշի ժողովուրդը մշտական սարսափի մէջ է. մայրերը համոզում են իրենց որդիներին, որ օր առաջ հեռանան դէպի Ռուսաստան ու ապրին այնտեղ, մինչև տեսնեն „Աստուած ինչ դուռ կը բանայ վըր մըզի“։ Թշւառ, ապաբախտ մայրեր, տեսել են մի անգամ թէ ի՞նչ սոսկալի է թշնամու գազանութիւնը... Խնդրում ես պատմել կոտորածի արհաւիրքներից, և պատմում են քեզ միանման, սոսկալի մանրամասնութիւններով և այնքա՜ն անզգայ, անտարբեր. զարմանում ես, մարդիկ քարացել են, ապշել յարկարծակի հարւածներից, նրանց համար սովորական բան է դարձել արիւնը...

Երկու օր առաջ բանտից փախան 17 բանտարկեալներ, որոնցից 3-ը հայ էին. երէկ գտան 7-ին, որոնցից մէկը

հայ, իսկ միւսները չկան. խուզարկութիւնները շարունակուում են, խուզարկողները կը կատարեն իրենց պաշտօնը ամենայն „խնամքով“։ 2-3 շաբաթ առաջ զօրքեր բաժանեցին Այգեստանի թաղերի վրայ։ Յայնկոյսներաց թաղը այնքան զօրք կայ, որ կանայք վախենում են թաղի եկեղեցին գնալ։ Տեղիս ժողովուրդը առհասարակ երկչոտ է և չափազանց շահասէր. զարմանալի է մեր քաղաքացին. այնքան հարուածներից ու տառապանքներից յետոյ ևս նա դեռ ամուր կապուած է առօրեայ մանր կեանքի հետ և դժուարութեամբ է մարսում աւելի բարձր գաղափարներ։

ՆԱՄԱԿ ԱԽԼԱԹԷՆ

15 օգոստոս, 1903

Համիդիէները եւ թիւրք կառավարութիւնը.

Նորութիւնը կառավարութեան բռնած ընթացքն է հասնանցի Համիդիէներու դէմ՝ Բուլանըխի մէջ։

Թիւրքիոյ գործերուն քիչ շատ ծանօթ մէկը չկայ, որ չգիտնայ թէ քրդերը արդէն անյիշատակ տարիներէ իվեր աւազակութեամբ կ'ապրէին։ Բաղէշի Վիլայէթի մէջ անմրցելի կը մնային աւազակութեան ասպարիզում։ Համիդիէի ստեղծումէն իվեր քրդերի աւազակութիւնը իր գերագոյն աստիճանին հասաւ։ Հասնանցիները տեսան, թէ քաղաքական պաշտօնեաները անզօր են զիրենք դատելու, զինուորական պաշտօնեաներու ալ ձեռքին տակ չեն, այլ անջատ մի խումբ կը կազմեն իրենք իրենց համար, անոնք ուրախացան և միացած իրենց պետերու հետ, ինչպիսին էին Ըռզախ, Ֆատէ, Հիւսէն, Սիւլէյման, Կոլէ Ալի, որոնք թէ ցեղապետներ են և թէ Համիդիէի բարձր պաշտօնեաներ, կազմեցին պաշտօնական աւազակային ընկերութիւն մը։

Իրենց սկզբունքն էր՝ պետերէն մէկուն ձեռքին տակ խուլամ (ծառայ) նկատուիլ, գնալ խմբովին հոս կամ հոն կողոպուտ վերցնելու և բերածը հաւասարապէս բաժնել իրենց մէջ, բաժին մըն ալ պետին հանելով։

Ցաջող կ'երթար աւազակներու այս ընկերութիւններու գործերը։

Խեղճ հայերուն, որոնց եզներ, կովեր, ձիեր, գոմէշներ ու մատակները կողոպտուած էին, կառավարութիւնը կը պատասխանէր. „մենք չենք կրնար Համիդիէ դատել, անոնց մուշուրը Երզնկա կը նստի, հոն դիմեցէք“։ Ի՞նչ կրնար ընել աղքատ հայը. մինչև Երզնկա երթալ և 9 առ 10 դատարկ ետ գալ, ահագին ծախքերով միասին, անկարելի էր։ Կը մնար համակերպիլ եղածին ու նստիլ իր տունը, սպասելով յաջորդ կողոպտումին։

Օրէօր կը զօրանային աւազակային միութիւնները և կըսպառնային իսպառ ջնջել հայ գիւղացիի կարողութիւնը։

Սակայն յանկարծ լուր կը հասնի թէ դեսպանները Կ. Պոլսի մէջ ժողով գումարած են մակեդոնական խնդրի առթիւ, և թէ հաւանականութիւն կայ, թէ հայկական հարցն ալ հոն ծեծուի, քանի որ երկու հարցերը անբաժանելի քոյրեր են։ Միևնոյն ժամանակ Բարձրագոյն Դռնէն հրաման մը կուգայ՝ „հասնանցիները նեղեցէք, տարած աւարներէն մի մաս ետ առէք, տուէք տէրերուն“։ Սակայն կառավարութիւնը իր դարաւոր ինթրիգը հոս ալ բանեցուց։ Լուր ղրկեց բոլոր այն քրդերուն, որոնցմէ ալ հասնանցիները աւար բերած էին, որ գան իրենց տաւարները և ապրանքները տանեն։ Քրդերը շահեցան։ Հապա հա՞յը։ Անոր մասին խօսք չկայ։ Տարիէ մը իվեր է որ Մշոյ դաշտի իրիզակցիք ու Ախլաթի արհորցիք կառավարութեան բողոքած են հասնանցի աւազակներուն դէմ, ասոնց հետ շատ մը ուրիշ գիւղեր ալ մէկ-երկու տարիէ իվեր նոյնը ըրած են, սակայն ոչ մի հրաւիրագիր չեկաւ ասոնց. .

Մինչ հասնանցիները կառավարական ճնշումը կը կրեն, իրենց տարած աւարները ետ տալու կըստիպուին, անդին՝ Ալճաւազի գաւառին մէջ՝ ուրիշ գոյնի երևոյթ տեղի կ'ունենայ։

Հայտարանցի Քօռ Հիւսէն, որ Համիդիէի հաստատուելէն իվեր փաշայութեան բարձրացած է, չգիտեմ՝ իր ո՞ր արժանիքին համար, այժմ սկսած է այն կողմի հայութիւնը ճնշել։

Վերջերս եկեր է կոճերի գիւղին մէջ քէօշք շինել կ'ուզէ, իր բնակութիւնը հոն հաստատելու համար։

Կոճերցիները կը հաւաքուեն կերթան իր քով, կը խնդրեն որ ետ կենայ իր այդ մտքէն։ Պարզապէս կը խօսին իրեն, թէ ինք փաշայ մը ըլլալով՝ իր քով հազարաւորներ կուգան կերթան և այդպիսով գիւղը ծանր ծախքերու տակ մնալով կ'աւարի, նիւթապէս կը փճանայ և որ չեն կրնար իր քով եկող գնացողներու ծախքին տակ մնալ։ Հիւսէն փաշան մտիկ չ'ըներ և կըսկսի իր շէնքը շինել։

Այժմ միտք մը կայ որ գաւառի բոլոր հայերը միացած, կառավարութեան բողոքեն այդ մասին. թէև իրենք ալ գիտեն թէ զուր է ոևէ բողոք, սակայն ճարահատի մը վերջին ճիգն է որ պիտի թափեն այդ հայերը։

Ահա այսպէս՝ մինչ մէկ տեղը փոքր ինչ բարեկարգութեան նշան ցոյց կուտայ թիւրքը, միւս կողմէ ճընշումը կը սաստկացնէ, հայը միշտ ծանր լուծի տակ պահելու համար։ Սակայն հասնանցիներուն զսպելը փաստ է և ակամայ հարց կը ծագի՝ ի՞նչպէս բացատրել կառավարութեան այդ քայլը։

Ըստ իս միայն մէկ մեկնութիւն մը կայ ատոր։ Ցայտնի է թէ երկրաշարժէն կործանեցան Մանազկերտի և Բուլանըխի շատ մը գիւղերը, այդ պատճառով ալ եւրոպացիներու ներկայացուցիչներ՝ հիւպատոս, քննիչ ևն շատ կ'երթևեկեն աղէտին վայրերը։ Կառավարութիւնը երկու բանէ վախցաւ՝ մէյ մը այն, թէ մի գուցէ հայերը օգտուելով առիթէն, խնդրագրեր ներկայացնեն օտար ներկայացուցիչներուն և դրութիւնը ինքնին պարզուի ու հայկական հարցը անգամ մըն ալ ոտքի կանգնէ. ատոր համար ինքը ուզեց խաբուսիկ կերպով օրօրել հայերը մինչև այդ վտանգը անցնի, մինչև եւրոպացիները քաշուին։ Երկրորդ՝ վախցաւ թէ ըրացած Համիդիէները, եթէ յանկարծական զսպումի մը չ'ենթարկուին, թերևս հիւպատոսներու ներկայութեանը իսկ շարունակեն իրենց ապրուստի միջոց եղող աւազակութիւնը, կամ նոյնիսկ այնքան յառաջ գնան, որ հիւպատոսներէն մէկն կամ միւսը կողոպտեն ու այսպէս կենդանի ապացոյց տան իրենց արարքներուն։ Ահա այս պատճառաւ մէկ-երկու ամսուան չափ պիտի զսպէ զանոնք կառավարութիւնը, մինչև վերջանայ միջամտութեան վախը, մինչև տեղերնին վերադառնան հիւպատոսները, ու նորէն մէջտեղ պիտի ելլէ „ասքի թաս, ասքի համամ“, ինչպէս կ'ըսեն թիւրքերը։

Նոր չէ այս խաղը որ թիւրք կառավարութիւնը կը խաղայ։ Բայց ամէն անգամ ալ յաջողած է այդ խաղով

ժամանակաւոր կերպով քնացնել Հայերը և խաբել եւրոպացիները։

Տեսնենք այս անգամը ինչ Հետևանք կունենայ տաճիկ քաղաքագէտների խաղը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽԱՐԲԵՐԴԷՆ

I

10 Նոյեմբեր, 1903

Վերջին մի քանի ամսւայ մէջ եղած ձերբակալութիւններն ու Հալածանքները Խարբերդի մէջ մօտալուտ խոշոր տագնապի մը նախակարապետը կարելի է նկատել։ Յիշենք միայն քանի մը դէպքեր։

Մայիս 30-ին կիրակի օրը, Մեզրէի մէջ արապկիրցի Զուլճի երիտասարդի մը տունը կը խուզարկեն և մէկ քանի Հրացան կը գտնեն։ Անհրաժեշտ չարչարանքների ենթարկելէ վերջ՝ պատուհանէն վար կը ձգեն, իբր թէ արդարանալու Համար փախչելու պահուն ինկած և վնասուած ըլլայ։ Վատերը իրենց սովորութեան Համաձայն՝ բռնաբարած և անտանելի դրութեան մէջ ձգած են երիտասարդի կինը։ Երիտասարդը ամերիկեան քաղաքացի ըլլալ կը կարծուի՝ Հիւպատոսին միջամտութեան պատճառով։

Յունիսի 14-16-ը սարսափի օրեր էին, որ եկան վրդովելու խարբերդցու կարծեցեալ Հանգիստը։ Աչքի զարնող ուսուցիչներ կը ձերբակալուին, առանց Հարց ու փորձի, և Հայերի տուները առՀասարակ խուզարկութեան կ'ենթարկուին։ Խարբերդը ամբողջովին վտանգուած կարելի է նկատել։

Լուր առնելով իբր Տէրսիմի մէջ յեղափոխականներ ապաստաներ են, կառավարութիւնը Հրամայեց Խոզաթի և Չմշկածագի զօրքին՝ Հետամուտ լինել խռովարարներին ձերբակալելու Համար։ Զօրքը կռիւ կ'ունենայ և պզտիկ վնասով (3 Հոգի վիրաւոր) կը վերադառնայ։ Կառավարութիւնը կասկածելով թէ ժողովուրդը Հացի նպաստ կուտայ յեղափոխականներին, որոշած է, որ իւրաքանչիւրը 6 չափէն աւելի ցորեն չստանայ. Հակառակ պարագային՝ օրինազանցները 6 ամիս բանտարկութեան կը դատապարտուին։

Քանի որ կառավարութիւնը արտասովոր խստութեամբ կը Հալածէ ու կը Հարստահարէ ժողովուրդը, Հայ երիտասարդութիւնն ալ գիտէ որոշ չափով վրէժխնդիր լինել այս անիրաւութեանց։ Արձանագրեմ մի դէպք, որ տեղի ունեցաւ յուլիս 20-ին Խարբերդի Իջմէ գիւղին մէջ։ Երեք Հայեր ատրճանակով կըսպաննեն այդ գիւղին մէջ գտնուող Սատըգ անուն մի ճէնտարմ, և նոյն գիւղացի Իսմայիլ անուն մի կատղած Թիւրք։ Կ'ըսուի թէ սպանութեան մասնակցող 2 Հայերը բռնուած են Սարսըրի գիւղի մի տան մէջ։

Կառավարութիւնը դեռ ևս կը շարունակէ իր Հալածանքները. ձերբակալուածներու թիւը 100-էն կ'անցնի։

Եւրոպական թերթերը հաղորդեցին, որ ամերիկական, գերմանական եւ անգլիական հիւպատոսների ներկայացրած բողոքի վրայ՝ Խարբերդի կուսակալը հրաժարեցուած է։ ԽՄԲ.

II

Մ... գիւղ 3/16 Նոյեմբեր, 1903

Այս տարի դժբախտութիւնները շղթաշար կուգան մեր վրայ։ Ծանօթ բանտարկութիւնները կը խորհիմ թէ ամէն տեղ լսեցան։ Քաղաքիս երևելիներէն 40-ի չափ անտեղի զրպարտութիւններով բանտը կը գտնուին։ Սեդրակ Սէմէրճեան անուն երիտասարդը այնչափ ծեծած էին, որ մարած ինկած էր բանտին մէջ, յետոյ բռնած վար նետած էին երրորդ յարկի բարձրութենէն, որպէս թէ փախչել ուզած ու ինկած է։ Պրօֆ. Թէնէքէճեանը 5 օր քնՀատ թողուցած էին որ խելքը կորսնցուց ամիսի մը չափ։

Բայց աստնցմէ աւելի ցաւալի դէպք մը պատաՀեցաւ անցեալ օր. մէզրեցի Պօղոս Զուլֆայեան անուն ազնիւ ու եռանդուն երիտասարդը երբ կը լսէ բանտարկեալներու այդ դառն տանջանքը, կերթայ տեսնելու զանոնք և քիչ մը յոյս ներշնչելու իր Համոզիչ ու քաղցր խօսքերովը։ Սակայն բանտին պաՀապան ոստիկանները զինքը կ'անարգեն ու ՀայՀոյութիւններով ետ կը դարձնեն բանտին դռնէն ըսելով. „իշտէըն չէքէր օնլարի կէօմէկ սէ, տուր սէնի տէ եանլարընէ կէթիրիըզ“ (եթէ կը փափագիս զանոնք տեսնել, մօտ արենէն քեզ ալ անոնց քով կը բերենք)։ Անձնուէր և քաջ երիտասարդը խոցոտուած սրտով և արդար վրէժխնդրութեան ոգւով գինովցած ետ կը դառնայ։ Ճամբուն վրայ կը Հանդիպի թիւրքի մը որ Հայու մը ՀայՀոյելով ապտակել կըսկսի։ Երիտասարդը այս բանին չՀանդուրժելով, վրայ կը Հասնի կատաղութեամբ և խեղդամահ կ'ընէ թիւրքը, որ կ'իյնայ կը սատկի. սակայն անդիէն ուրիշ թիւրք մը վրայ Հասնելով, դաշոյնը կը կոխէ երիտասարդի կուրծքը, որ գետին կ'իյնայ և կը մեռնի։

Հանգուցեալ Պօղոս Զուլֆայեան ծնած է Մէզրէ քաղաքը, իր նախնական ուսումը առած է Մէզրէի լատինացոց դպրոցը, յետոյ մտած է Խարբերդի Եփրատ գօլէճը, բայց Հօրը աղքատութեան պատճառաւ Հոն չի կրցաւ իր դասընթացքը աւարտել, և ստիպւեցաւ իրենց օրապահիկը ճարելու Համար արՀեստի երթալ։ Սպաննւեցաւ 25 տարեկան ծաղիկ Հասակին մէջ։ Թէև չար ձեռք մը բաժնեց զայն մեզնէ, բայց իր յիշատակը միշտ կենդանի է մեր սրտերուն մէջ։ Հանգիստ անձնուէրի մաղղաշ ոսկորներուն։

ՆԱՄԱԿ ՏԻՎՐԻԿԷՆ

4 Հոկտեմբեր, 1903

Իրաւ է որ շատ դառն ու ցաւալի է միշտ տխուր լուրեր Հաղորդել, բայց ի՞նչ ընած որ մխիթարական ո՛չ մի բան ունինք։ Հայ գիւղացուն կեանքը տառապանքներու ու զրկանքներու ծով մըն է, զոր նկարագրելու ամենակարող գրիչներն ալ անկարող են։ Խեղճ գիւղացին ամբողջ տարի մը աշխատելով Հազար և մէկ նեղութեամբ կալ մը երևան կը բերէ (արդէն բնութիւնն ալ այս տարի կարծես երես դարձուցած էր զրկելով իր կարկուտը, որ փճացուցած էր բերքերու երեք քառորդը) ու աՀա պաՀանջատէր վաշխառուն իբր Հոգեհան Ազրայէլ տնկւած է կալին գլուխը։ Թշւառ գիւղացին ստիպւած է սարսռազդեցիկ տոկոսներով մուրՀակը նորոգել, որպէս զի գէթ ցամաք Հաց ուտելու չափ Հացահատիկ տանի իր տնակը։ Ձմրան խիստ ու ամուլ եղանակին մէջ զինք և իրենները ապրեցնելու արդէն անբաւական պաշարը դեռ իր տեղը չպարպած, վրայ կը Հասնի թաՀսիլտարը. տեսարանը սրտաճմլիկ է. մերկ

ու բոպիկ գիւղացիին բերնին պատառն է որ կը քաշեն ամենայն սառնասրտութեամբ և անգթութեամբ։ Ոմանք մինչև իսկ մարագներուն մէջ կ՚ուզեն պահել, բայց թիւրք թահսիլտարն ու զապթիէն շան հոտառութիւն ունին, ամէն մի անկիւն, ծակ ու ծուկ կը պրպտեն և գտածնին կը գրաւեն՝ ինչպէս ցորեն, գարի, քուշնա, ոսպ, բակլա, անկողին և մինչև իսկ գիւղացւոյն չափելու գործիքը թիմլակուն, առանց երբէք խղճահարելու, թէ իրենց ետև գիւղացիին ոչինչ ձգեցին իբր սերմնացու ու օրապարէն, մինչդեռ ստիպուած էին, ըստ թրքական օրէնքի, անոնց չդպչելու։ Կը գտնուին երբեմն բողոքողներ, բայց ո՞վ է լսողը և թիւրք անյատակ գանձին պաշտօնեաները խեղճ գիւղացին բառին բուն նշանակութեամբ կը շինեն կոլիկ։

Այս յուսահատ կացութեան թրքատուր պարգևը չէր բաւեր, ու ահա կայծակի պէս նոր տուրքեր կը հասնին շարած գիւղացին շանթահարելու։ Ապրուստի միջոց մէյմէկ հատ էշ ու եզ ունեցողներ ինչո՞ւ տուրք չի պիտի տային բարեխնամ կառավարութեան, որուն անքթիթ հսկողութեան պարտական են իրենց ստացուածքին պահպանութիւնը, բայց բարեխնամ (՞) կառավարութիւնը իր հսկողութեան նոր տուրքով ալ չի բաւականանար և սովամահ ու չարաչար սպաննել կ՚ուզէ իր սիրելի հպատակները։ Անցեալները պատահմամբ Օտուռ գիւղը կը գտնուէի, ականատես եղայ, թէ ինչպէս մի քանի հարկահաւաք թիւրք պաշտօնեաներ հոն ժողոված՝ հին հաշիւներ կը պրպտէին։ Հետևանքը դժուար չէր նախատեսել և սպասուածն իրականացաւ։ Հաշիւներու քննութենէն հասկցուած է ,որ մեծ բաց մը կայ եղեր, ուրեմն այս բացն ալ պէտք է գիւղացւոց վրայ բարդել։ Եւ ահա անմիջապէս բարդելու տխուր արարողութիւնը կատարուեցաւ և օրինակ 100 ղուրուշ պարտքին տակ տնքող գիւղացիին պարտքը բարձրացաւ 4-500 ղուրուշի, որոնց գանձումը, ո՞վ գիտէ, ինչ նոր արհաւիրքներ պիտի թափէ լեղապատառ գիւղացւոյն գլխուն։ Աննկարագրելի վիշտ ու թախիծներով խորադրոշմուած գիւղական կնճռոտ դէմքեր կը քշուէին իմ աչքիս առջևէն և ես գլխիկոր կը հեռանամ, անիծելով հայութեան մշտատև սև բախտը։

ԽԱՆԱՍՕՐԻ ԿՈՒԻՆ

(Թարգմանութիւն քրդերենից)

Խանասօրի դաշտում, աղբիւրի ակներին
Հայ ֆէդայիները արշալոյսին բանակ են դրել։
Կեակէ Հասան պէյը [1]) կանչում է. „Է՛յ, համիդիէնե՛ր, դուրս եկէ՛ք,
Էդ ֆէդայիները մեր քեօք ու օճախը կը հանեն“։

Խանասօրի դաշտն է փշոտ,
Կեակէ Հասան պէյի կօնին (վրան) հպարտ ու եօթ հարիւր հայ ֆէդայ են եկել,
Բռնել են Կեակէ Հասան պէյի կօնը կարաւուլով ու ջասուզով։
Կեակէ Հասան պէյը կանչում է՝ „Անպատուաբեր մի կռիւ է էս“։

Էրուած Խանասօրի դաշտը դեղին քար է,
Հայ ֆէդայու մուզիկայի երգ ու ձայնն է.
Շարաֆ պէյին եօթ տարեայ դողն է բռնել ու փախչում է
Մինչև Զաֆար-աղի կօնը՝ մօտը զէնք չի մնում։

Նախշուն Բաշգալէն հեռագրել է Ստամպօլ.
Նախշուն Խանասօրի դաշտում իսլամի որդին ընկել է ղուլղուլ
Հայ ֆէդայու ձեռքից. անձնատուր են լինում, բահաթից բախտն են խնդրում.
Տէրութեան զօրքը Երզնկայում ծանր է նստում։

Խանասօրի դաշտը եղեգնոտ է,
Կեարաղանայ [1]) եղեգնուտը տղմոտ է.
Աւդալէ Օրդիկազին [2]) կանչում է. „Հայ ֆէդա՛,
Ես հայ եմ. ձեր խաչը պագնեմ, ինձ մի սպանէք, ես հայ եմ“։

Էրուած Ցառավուլ մառախուղով է,
Առաւօտ Սըսանայ գլխին հայ ֆէդայու Մաւիզարի գժկժոցն է.
Աղաներին ու կտրիճներին են սպանում,
Աշխարհի ու երկրի վրայ իրենց մեծ նամուսն են պահում։

Խանասօրի դաշտը մի զառիվայր տեղ է,
Ֆէդայի Վարդանի պեխեր մետաքսի հատ-հատ թել է.
Կանչում է. „Է՛յ, համիդիէնե՛ր, ձեր հօր քիթը անիծեմ.
Սըսանայ գլխի առաւօտեան կռիւը եկել է ձեր ընտանիքի առջև. ի՞նչ նամուսով մի կռի՛ւ է“...

Կռուի տեղը էրուած Խանասօրի դաշտն է՝ սառ ջրերով,
Ֆէդայի Նիկօլի ծխափայտը շիրազէ բեահրուբարի ձևին է.
Կանչում է. „Է՛յ, եղբայրնե՛ր, ձեռք ձեռքի տէ՛ք,
„Մենք էդ համիդիէների քեօքը կտրենք աշխարհի ու երկրի երեսից“։

Ախպէրն է կանչում. „Փոխան եղբա՛յր, սկսի՛ր“.
Ախպէրն է ասում. „Դարմօ եղբա՛յր, սկսի՛ր,
„Մենք համիդիէների քեօքը կտրենք աշխարհի ու երկրի վրայից,
„Թո՛ղ իմանան, որ մենք նախնիքների հոգին ունինք։

„Աղջի՛կ համիդիէներ, սև փոշին ձեր գլխին ածէ՛ք.
„Մենք մի քաջութիւն ենք անում,
„Թո՛ղ հայ ֆէդայու ձայնը գնայ Ստամբօլի դուռ
„Ու իսլամի որդին իրեն համար բահաթի բախտը ուզի“։

ԲՈՂԱՋԻԵԱՍԱՆԱՅ ԿՈՒԻՆ

Սալմաստն է ծառերով.
Նիկօլ տասներկու մարդով ներքև է իջել,
Երեք վաշտ համիդիէ առաջն են բռնել,
Մալա Նաբիի փաշան երկու գնդակով է վիրաւորել։

Էրուած Սարան է քեարէզներով.
Համիդիէ ձիաւոր-ոտաւոր ընկել են իրար.
„Երեսուն աշիրա՛թ, ձեր հօր բերան անիծա՛ծ, ձեզ հետ սպանութիւն չեմ անում
„Այդ չորս տուն քրիստոնեաների համար“։

1) Քիւրդ ցեղապետի անուն։

1) Տեղի անուն, 2) Քիւրդ ցեղապետ։

Էրւած Բողազքեասան՝ ջուր ու աղբիւրով.
Հայ Նիկոլը Նադանի բեօշքում մի մեծ որոշում տւաւ.
Նիկոլը կանչում է, ասում է. „Մինա՛ս, Խաչատո՛ւր,
Գելեգո՛, ձեռք վերցրէ՛ք, մեզ օգնող չկայ.
„Մեզ օգնող միայն լոյս Քրիստոսն է մնացել։

„Էրւած Բողազքեասան է սէզով,
„Համիդիէների գնդակ ու վառօդ մեզ վրայ է վզվզում.
„Շաւէշ ու Զնդին ես սպաննեմ՝
„Ազիզ Ապրիկայ փոխարէն“։

ՅԱՊԱՂՈՒՄ 6 ՖԷԴԱՅԻՆԵՐԻ ԿՌԻԻՆ

Խաչանայ դաշտ տափակ դաշտ է,
Երեք վաշտ Համիդիէ վեց տղայի վրայ են հաւաքւել։
Օհաննէսը կանչում է. „Սենո սկսե՛նք“.
Քըրթօն ասում է. „Օհաննէ՛ս, ձեռքդ բեզ պահիր,
„Վախենում եմ սպաննես Շառոյի տան թոռընից,
„Դրա համար Խաչանայ հայերին ընչեն արմատից“։

Խաչանայ դաշտ մեգ ու մառախուղ է.
Քսանուվեց Համիդիէ գիւղեր վեց տղայի վրայ են հաւաքւել.
Օհաննէսը կանչում է. „Սենո՛, սկսէ՛ք,
„Ախըր վերջին տեղներս Պարսկաստան է“։

Խաչանի դաշտը գեղեցիկ է.
Օհաննէսի ձեռքի վրայ մավզէրը փայլում է.
Մինասը կանչում է. „Օհաննէ՛ս, արի՛, մի գնա՛,
„Զմրան կռիւը աննամուս է“։

Կայմաղայ եղեգնոտն է խոտերով.
Հայդարանցու զօրքը ծանր արմատ է գցել,
Օհաննէսը ասում է. „Սենո՛, ղուրբան, խփի՛ր,
„Էս օրը մարդու և կտրիճի օր է“։
Սիմոնը կանչում է, ասում է. „Օհաննէս, ղուրբա՛ն,
„Մեր ընկերները սառել են, ձեռքները չի բռնում մավզէրի թաթիկը“։

Էրւած Բաղիտաղն է թափիաներով (ամրոց).
Անուշ է գալիս մավզէրի շըրըխկոց ու այնալիի ձայնի ռընգռընգոց.
Օհաննէսը կանչում է. „Դառուէշէ Օղման, քո հօր բերան անիծեմ,
„Երանի գարունք լինէր ու ձեռքերս չսառէին,
„Քեզ էլ պիտի կտրէի, դամանցիների քեօքն էլ [1])“։

1) Քիւրդերը իրենց շատ երգերի ոտքերը յարմարեցնում են երգած ժամանակ, հետեւից լէ, լէ, լօ, լօ, հէ, լէ եւն կցելով։ Բացի դրանից իւրաքանչիւր երգող իր ուզածի նման կարճացնում ու երկարացնում է ոտքերը։

ԿԱՐՍԻ ԴԻՆԱՄԻՏԱՅԻՆ ՊԱՅԹՈՒՄԸ

ՀԻՆԳ ԶՈՀԵՐ

Օգոստոսի 29-ն էր։ Ժամը 5-ին ամբողջ Կարսի հասարակութիւնը, կայծակնահարի պէս, վազում էր դէպի Կռոյի թաղի վերջին ծայրում գտնւող Վարդան Տօնոյեանցի բնակարանը, ուր դինամիտային պայթումի զոհ էին գնացել հինգ յեղափոխականներ։

Տեսարանը սոսկալի էր. հինգ երիտասարդ դիակներ, բոլորովին այլանդակւած՝ պառկեցրած էին մերկ գետնի վրայ։

Այն զգայուն սրտերը, որ մի ժամ առաջ այրւում էին մայր-հայրենիքի ազատ լեռների վրայ թափառելու բուռն տենչանքով՝ դադարել էին բաբախելուց։ Այն բազուկները, որ հրացանի համար էին վարժւած, ընկած էին արիւնաթաթախ, այս ու այն կողմ։ Սենեակը, ուր հինգ նահատակները ուրախ ու զւարթ ռումբեր էին լեցնում, դեռ ևս ծխում էր և տպաւորութիւնը աւելի ևս կսկծալի դարձնում. պահապանների մի շղթայ շրջապատել էր անտէր դիակները։

Ժողովուրդը խռնւած էր և յուզւած, անկարող բացատրելու այդ օտարօտի տեսարանը, նրա իմաստը։ Ոստիկանութիւնը ամբողջ Կովկասը դղրդացրեց հեռագիրներով։ Զգիտէին՝ կապե՞լ արդեօք դէպքը կատարւող ցոյցերի հետ. թէ տաճկահայերի ազատական շարժման հետ, գուցէ հէնց այդ պատճառով էր, որ ոստիկանութիւնը չորս օր դիակները թողեց փողոցում, մինչև որ Թիֆլիսից եկան յատուկ քննիչներ՝ դիակները տեսնելու և գործը քննելու համար։

Հայ ժողովուրդը շատ լաւ գիտէր, թէ ովքեր էին զոհերը։ Ամբողջ չորս օր քաղաքը սգի մէջ էր։ Շատերը խուլ հեկեկում էին։ Անկեղծ ցաւ էին զգում ամէնքը, առանց դասակարգի և հասակի խտրութեան, բացի մի խումբ „ինտէլիգէնտ“ սրիկաներից, որոնք այդ ընդհանուր սգի միջոցին շարունակում էին իրենց քէֆերը...

Դէպքի չորրորդ օրը հազիւ աջողւեց առնել ոստիկանութեան ձեռքից Վարդան Տօնոյեանի դիակը՝ թաղելու համար։ Միւս չորս օտարականների դիակները ոստիկանութիւնը թոյլ չտւեց եկեղեցում դնել, այլ ինքը ուղարկելով նրանց գերեզմանատուն, հրաւիրեց հայ քահանային թաղման հանդէս կատարելու։

Յուզիչ էր այդ թաղումը։ Սիրեցեալ Վարդանի պսակներով զարդարւած դագաղը մինչև գերեզմանատուն (3-4 վերստ) ամբողջ ժամանակ տարաւ ժողովուրդը։

Վեց-եօթ ոստիկանների, 2-3 ժանդարմների և մի պաշտօնեայի ներկայութիւնը չկարողացաւ արգելել, որ փոխանակ եկեղեցական երգերի և սաղմոսների՝ „Մեր Հայրենիք“-ը առաջնորդէր վաղամեռ Վարդանին դէպի յաւիտենականութիւն։ Երբ սգահանդէսը ժամանում էր գերեզմանատան, միւս 4 դիակները շրջապատւած էին 30 ձիաւորներով, որոնց առաջնորդում էին 3 ժանդարմներ։ Բազմութիւնը աւելի ևս յուզւեց այդ անսովոր տեսարանից։

Հինգ մատաղ կեանքեր իրար կողքի թաղելուց, մի „եղբայրական“ խոստում անելուց յետոյ ժողովուրդը վերադարձաւ քաղաք և խաղաղ ցրւեց, լցւած բուռն ցասմամբ դէպի կառավարութիւնը, որ անշունչ դիակներին իսկ հանգիստ չի թողնում։

Կարսի գերեզմանատան մի խուլ անկիւնում սառը հողի տակ ընդմիշտ ծածկւեցին հինգ անձնւեր ընկերներ, որոնք ամէն ինչ մոռացած, գիշեր-ցերեկ պատրաստւում էին ապագայ „գարնան կարմիր օրերի“ համար։

„Պատահականութեան“ չարաշուք Աստւածը խորտակեց նրանց վառ երազները. ճնշւածներին պաշտպանելու ու թշնամու դլխին ռումբ ու հրացան պայթեցնելու տեղ, նրանք իրենք զոհ գնացին իրենց ձեռքով պատրաստւած նիւթերին։

Ոչնչացան հինգ երիտասարդ կեանքեր, յեղափոխութեան նուիրուած թանկագին ընկերներ։ Բայց մի՞թէ կ՚ոչընչանան և նրանց վառ յոյսերը, մի՞թէ մոռացութեան կը տրուին նրանց ասածները, նրանց թանկագին յիշատակը...

Ներքև բերում ենք կարճ կենսագրական տեղեկութիւններ իրենց մուրազներին չհասած այդ զոհերի մասին։

—

ՎԱՐԴԱՆ ՏՕՆՈՅԵԱՆՑ.—Գիւղական ընտանիքի զաւակ էր Վարդանը։ Դեռ մանկութիւնից իր վրայ զգացել էր թշուառութեան, աղքատութեան բոլոր ծանրութիւնը և դարձել էր զգայուն դէպի թշուառը, դէպի ճնշածը։ Տասնևութ տարեկան հասակում կիսատ թողնելով Կարսի քաղաքային դպրոցի դասընթացքը, դուրս է գալիս նա և մտնում ծառայութեան՝ իր բազմանդամ ընտանիքը տնտեսական քայքայումից ազատելու համար. այնուամենայնիւ Վարդանը չի մոռանում իր կրթութիւնը և շարունակում է ինքնակրթութեամբ լրացնել ուման պակասը. առանձնապէս զբաղւում է մայրենի գրականութեամբ։ Համեստ և շիտակ բնաւորութեամբ նա սիրելի ու համակրելի դարձաւ բոլոր շրջաններում։ Վազում էր ամէն տեղ, անում էր ամէն ինչ, միայն թէ արած լինէր ոևէ բան։ 1902 թւին մտնելով Հ. Յ. Դաշնակցութեան խմբերի մէջ, ընտրւում է քաղաքի ղեկավարող մարմնի անդամ և այդ օրւանից օրէցօր աւելի և աւելի եռանդով գործում յեղափոխական ասպարիզում և սիրելի դառնում բոլոր խմբերին։ Չկար մի յանդուգն, վտանգաւոր յեղափոխական գործ, որին մասնակցելու ջերմ պատրաստականութիւն չյայտնէր և եռանդով չկպչէր ու գլուխ չբերէր այն։ Այսպիսի մի վտանգաւոր գործի էլ զոհ գնաց մեր սիրելի Վարդանը, թողնելով մի մեծ ու համակրելի ընտանիք առանց ապրուստի միջոցների։

ՊՕՂՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ (Լևոնիկ).—Մի կարճահասակ, վառվռուն աչքերով մատաղ երիտասարդ էր Լևոնիկը։ Թողնելով արտասահմանեան համալսարանները, յափշտակւած հայրենասիրական գաղափարներով, նա թափառում էր Կարսի շրջանի հայ գիւղերը, քարոզում ու խրախուսում էր հայ ժողովրդին Ամիսներով գիւղի օդաներում, իր շուրջը հաւաքելով խաւարի մէջ թաւալող ամբոխը, ոգևորում էր նրանց հայ քաջերի պատմութեամբ և կազմակերպում համակրողներից օժանդակ ու գործող խմբակներ։

Թէ քաղաքում և թէ գիւղերում բոլորը սիրում էին Լևոնիկին, դիմում էին նրան իրենց ներքին երկպառակութիւնները վերջացնելու համար։ Նա Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կոմիտէի շրջիկ քարոզիչն էր և ամենայն անկեղծութեամբ ու բուռն ոգևորութեամբ տանում էր իր ստանձնած գործը։ Վերջին զինատար խմբերի հետ մայր-հայրենիք գնալու պատրաստութիւն էր տեսնում նա, բայց ահա կէս ճանապարհին զոհ գնաց անսպասելի փորձանքին.,.

Ինքը Օդէսայում վերաբնակւած տրապիզոնցի տաճկահայ էր, 23 տարեկան։ Երևանի թեմական դպրոցը վերջացնելով՝ նա անցել էր արտասահման ուսումը շարունակելու դիտաւորութեամբ։ Մի քանի տարի Ենայի համալսարանում լսելուց յետոյ վերադառնում է Կովկաս, և չ՚անսալով ծերունի մօր խրատներին, որոշում է նուիրւել յեղափոխական գործին։ Վեց ամսի չափ շրջիկի պաշտօնը կատարեց նա ամենամեծ հմտութեամբ և բարեխղճութեամբ։ Ապագայի համար նա տալիս էր աւելի մեծ յոյսեր, բայց բոլորը տարաւ հետը սառը գերեզման...

ԻՍԱՋԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ Յ.—Չորս մտերիմ ընկերներ էին, դեռ Շուշու թեմական դպրոցի աշակերտական սեղանի վրայ, երբ ուխտ արին, երդւեցին նրանք նուիրւել յեղափոխութեան, անցնել ցաւերի և տանջանքների աշխարհը, զբաղւել հարազատների ազատութեան գործով։ Ուխտեցին և կատարեցին։ Երկուսը նրանցից (Մենակ և Թորգոմ) արդէն երկրումն են, երրորդը (Նժդէհ) օգնութիւն է հասցնում ընկերներին, չորրորդը հէնց ինքն էր, որ պատրաստւում էր երկրորդ անգամ երկիր մտնել, բայց ճակատագիրը այլ կերպ տնօրինեց։

Հաստատակամ, ամուր բնաւորութեամբ, անկեղծ յեղափոխական էր Իսաջանը. թեմական դպրոցը աւարտելուց յետոյ, իր ընկերների հետ կամաւոր զինուորական ծառայութեան մտաւ, ապագայ գործունէութեան համար այդ կողմից էլ պատրաստ լինելու համար։ Աւարտեց, պահեստի սպայի պաշտօն ստացաւ և թողնելով ծառայութիւնը, եկաւ Բագու, մի քիչ էլ կեանքի մէջ փորձառութիւն ձեռք բերելու համար, որպէս զի անցնի երկիր զինւած ամէն կողմից։

Կարճ ժամանակում Իսաջանը դարձաւ Բագւի աշակերտական խմբերի սիրելին, իր ոգեշունչ ու կրակոտ ճառերի և անկեղծ գործունէութեան շնորհիւ։ Աշակերտական խմբերի հետ մի տարուց աւելի հայ գրականութեամբ ու պատմութեամբ պարապելուց և ազգային ոգի ներշնչելուց յետոյ, Իսաջանը 1903 թւի ապրիլ ամսին իր ընկեր Նժդէհի հետ անցաւ Բասեն մի պատասխանատու ձեռնարկութեան աջողութիւնը ապահովելու համար։ Երկու ամսի չափ Բասենի գիւղերում քարոզելուց յետոյ, իր ընկերոջ հետ նա նորից վերադարձաւ Ռուսաստան, մի ուրիշ ձեռնարկութեան գլուխ անցնելու նպատակով։ Բայց... ընկերը բռնւեց, իսկ ինքը... զոհ գնաց սոսկալի պատահարին։ Կտրւեց այն կեանքը, որ այնքան արդէն բեղմնաւոր եղաւ կարճ ժամանակամիջոցում։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԻԿԵԱՆ.—Ծնւել է 1878 թւին, Խարբերդի Հիւսէյնիկ գիւղում։ Ընտանիքի անդրանիկն էր Յովհաննէսը. գիւղի մէջ նախնական կրթութիւն ստանալուց յետոյ՝ ծնողները նրան ղրկում են Խարբերդի միսիոնարական դպրոցը։ Չորս տարի մնում է նա այնտեղ և 1894-ին ձգում դպրոցը։ Քիչ յետոյ թողնում է և Խարբերդը, մեկնում է Պոլիս, այնտեղից Ամերիկա։ Այդտեղ նա սկսում է աշխատել գործարանի մէջ, օգնելու համար իր չքաւոր ծնողներին։

Դանր աշխատանքի միջոցին չեն խեղդւում նրա մէջ մտաւոր ու բարոյական բարձր պահանջները։ Ազատ ժամերին նա յաճախում է ամերիկեան կիրակնօրեայ բարձր դպրանոցը։ Հայրենիքի կացութիւնը նա մի վայրկեան անգամ աչքից չի թողնում։ 1897-ին Նահիկեան ուրիշ երեք ընկերների հետ, ինքնաբերաբար կազմում է դաշնակցական մի կոմիտէ, որ և միանում է Ամերիկայի միւս դաշնակցական կոմիտէների հետ։ Նախանձախնդիր իր կոմիտէի պատուին ու առաջադիմութեան՝ նա ջանք չխնայեց նրա շրջանը լայնացնելու։ 1901-ից նա նետւեց աւելի ընդարձակ պրօպագանդի շրջան, սկսեց քարոզել հրապարակական ժողովներում։

Ծնողների և մի կարգ բարեկամների յորդորները — որով կ՚ուզէին յետ բերել Նահիկեանին վտանգաւոր

ճանապարհից—ապարդիւն անցան։ Նահիկեան միշտ մնաց աննկուն և աւելի ևս եռանդով փարեց գործին։ Նա ուխտել էր միանգամ ընդ միշտ հաւատարիմ մնալ սիրած գաղափարին ու սկզբունքներին։

Եւ ահա 1903-ի յուլիսի 9-ին ձգեց Ամերիկան՝ հայրենիք ուղևորուելու հաստատուն որոշումով։ Վառ յոյսերով անցաւ Լոնդոն, այնտեղից Պարիզ, Ժընէվ, Թիֆլիս, Կարս... ուսկից կազմակերպութեան խմբերի հետ պիտի անցնէր Ներս... Բախտը, սակայն, արգելք եղաւ դրան... Դինամիտը ոչնչացրեց այդ թանկագին կեանքը, ոչնչացնելով նրա հետ և այն զինուորական փորձառութիւնները, որ Նահիկեան ձեռք էր բերել մօտ երկու տարուայ ընթացքում Քանքրտի միլիցիայի մէջ իր արած վարժութեամբ...

Ռոդոստոցի ՍԱՐԳՍԻ մասին՝ յաջորդ համարում։

„ՎՐԱՍՏԱՆ"-Ը ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(Շարունակութիւն № 9-ի)

Ազգային ինքնավարութիւն ձեռք բերելը Ռուսաստանում—ասում էինք մենք անցեալ համարում—կախուած է գլխաւորապէս իրենց՝ փոքրիկ ազգութիւնների դիմացկանութիւնից, համերաշխութիւնից և ապագայ անխուսափելի կռուում նրանց ցոյց տալիք ուժից ու կորովից։

Եւ իրաւ. ի՞նչ է սորվեցնում մեզ արիւնով ներկուած այն ուղին, որով ձեռք է բերուել յոյների, սերբերի և այլ փոքր ազգութիւնների ազատութիւնը կամ Զուիցերիայի, Ամերիկայի դաշնակցութիւնների կազմուելը։ Ի՞նչ է սորվեցնում մեզ Լեհաստանի անտառներում և Կովկասի լեռներում կատարուած եղեռնագործութիւնների ու սին ջանքերի պատմութիւնը։ Եւ, վերջապէս, ի՞նչ դաս պիտի առնել այն ազգայնական կատաղի պայքարից, որ մղւում է այսօր համարեայ բոլոր խառը ազգաբնակութիւններից կազմուած երկրներում։ Մի՞միայն նախապաշարուածները կամ լոյսի առաջ աչք փակողները կարող են չխոստովանել, որ Վրաստանի կամ Կովկասի ինքնավարութեան իրականացումը ևս կը պահանջէ հերոսական ջանքեր, արեան գետեր, տոկուն աշխատանքի երկար ու ձիգ տարիներ։

Բնական հարց է ծագում այդ պարագաներում՝ հապա ի՞նչ դիրք են բռնելու վրացիք և Կովկասի ինքնավարութեան ձգտող ուրիշ տարրերը մինչև հեռու յաղթանակի բոպէն, այսինքն իրենց կեանքի այն երկարատև նորմալ շրջանում, որը մերթ ընդ մերթ ընդհատուելու է յեղափոխական յուզումներով։

Կասկած չկայ, որ փոքրիկ ազգերի բռնելիք այդ դիրքը որոշուելու է այն „նորմալ" դրութեամբ, որը գոյութիւն ունի Կովկասում և որի „անորմալ" լինելը ոչ կարելի և ոչ էլ ներելի է աչքից թողնել։

Շնորհիւ ռուս կառավարութեան ձեռք առած բացառիկ օրէնքների՝ Կովկասի բոլոր ազատ հողերը, ինչպէս և գրաւած հողերի ամենալաւ կտորները յանձնուած են ռուս տարրին և այն էլ տեղացիներից անհամեմատ աւելի խոշոր բաժիններով։ Ռուս գիւղերի հաղորդակցութեան, ոռոգման, առողջապահութեան և ապահովութեան համար ձեռք են առնւում բացառիկ միջոցներ։ Բնութեան ամէն տեսակ պատահարների, ինչպէս և համաճարակների ժամանակ, աւազակութիւնների և այլ ձևի յանցանքների դէպքերում, առանձին խնամակալութիւն է ցոյց տրւում դէպի իշխող տարրին պատկանող ազգութիւնը։

Նոյնն է և քաղաքներում։ Սկսած կառավարչապետի գիւանատնից ու „ազատամիտ" դատաստանական շրջաններից և վերջացնելով հասարակ անտառապահներով, ոստիկաններով ու նոյնիսկ դռնապաններով—ամէն տեղ առաւելութիւնը տրւում է ռուսներին։ Երկաթուղիների կառավարիչները մրցում են միմեանց հետ՝ հայ, վրացի բանւորների թիւը պակսեցնելու մէջ։ Գործարանական վերատեսուչները չեն բաւականանում նրանով, որ շնորհիւ իրենց ազդեցութեան՝ ռուսների, հրէաների, եւրոպացիների գործարաններում չկան տեղացի ծառայողներ, նոյնիսկ բանւորներ։ Նրանք ամէն ճիգ են թափում, որ սահմանափակեն հայ, թիւրք, պարսիկ բանւորների թիւը նոյնիսկ հայերի և թիւրքերի գործարաններում։

Հետևանքը յայտնի է.

Միևնոյն ընդունակութիւն ունեցող, միևնոյն աշխատանքը կատարող ռուսները, շնորհիւ ռուս տարրին յատկացուած մենաշնորհի ու արհեստական կերպով լայնացուած պահանջի, ստանում են աւելի բարձր պաշտօններ, աւելի բարձր վարձատրութիւն, քան իրենց կողքին աշխատող ոչ-ռուսները։ Հողագործութեամբ պարապող ռուս գիւղացիք, շնորհիւ իրենց աւելի ապահով վիճակի, շնորհիւ գիւղական աշխատանքի համար ունեցած աւելի լայն միջոցների, ժամանակի ընթացքում գրաւում, վարձում, իրենց ձեռքն են գցում հարևան աղքատ տեղացիների հողերը, անասունները։ Ռուս գիւղերը սովորաբար տասնեակներով հովիւներ, մշակներ են պահում թիւրք, հայ, վրացի, լեռնականներից և այդպիսով աւելի ևս հարստանում նրանց հաշւով։

Ո՞վ կարող է հաշուել այն գումարը, որը շնորհիւ բրոնակալութեան սահմանած ազգային մենաշնորհի, վերցւում է ամէն մի միջին հայի, վրացու, յոյնի, լեզգիի գրպանից և փոխադրւում միջին, հովանաւորուած ռուսի գրպանը։ Աւելացրէք սրան այն ծախքը, որ անում են հազարաւոր ընտանիքներ, հարկադրուած սորվեցնել երեխաներին ռուսաց լեզուն և ոչ օգտակար համարուած դէպքերում ծախսելով դրա համար ահագին գումարներ, և դուք վայրկեան անգամ չէք կասկածիլ, որ այդ կողմնակի կերպով վերցրուած ու աւելորդ տեղը ծախսուած փոքր ազգութիւնների միլիոնները անհամեմատ աւելի բարձր են տէրութեանը ուղղակի կերպով վճարուող տուրքերից և կարող են մրցել այն տոկոսների հետ, որ վճարում են աշխատաւոր տարրերը հարստութեան մենաշնորհ ունեցողներին։

Ռուս տարրը, ընդհանուր առմամբ—իսկ այս պարագաներում կարելի է խօսել միայն ընդհանուր առմամբ—ի հաշիւ իր հարևան մանր, ոչ արտօնեալ ազգութիւնների՝ համեմատաբար բարգաւաճում, հարստանում է տարէց տարի, անհամեմատ աւելի լաւ է սնւում, աւելի լաւ ապրում։ Գտնւելով աւելի նպաստաւոր նիւթական և քաղաքական պայմանների մէջ, նա անհամեմատ աւելի լաւ է կրթւում, կուլտուրապէս աւելի արագ է զարգանում և այդպիսով հանդիսանում է իր հարևաններից աւելի ուժեղ, աւելի լաւ զինուած կեանքի կռուի համար։

Տարէց-տարի մեծանում է ռուս և ոչ-ռուս տարրերի տնտեսական տարբերութիւնը։ Եթէ այսօր միջին ռուս

գիւղացին, ծառայողը 2 անգամ է հարուստ միջին հայից ու վրացուց, 10 տարուց յետոյ նա կը լինի հարուստ 3 անգամ, 50 տարուց յետոյ 5-10 անգամ աւելի։

Կովկասում ստեղծւում է այդպիսով մի նոր քաղաքական մենաշնորհ վայելող տարր—ազգութիւն, որի կեղեքման ձևերը տարբեր են, բայց ոչ նւազ անարդար և ոչ պակաս ծանր, քան հողատէր-ազնւական և արդիւնաբերող-վաճառական տարրերի կեղեքումը։

Դժբախտաբար, տնտեսական այդ ճնշումով և փոքր ազգութիւնների թշւառացումով չեն սպառւում ռուսաց կերիշխանութեան չարիքները։

Շնորհիւ ռուս լեզուի պարտաւորեցուցիչ գործածութեան պաշտօնական շրջաններում, շնորհիւ ռուսերէն գիտցողներին տրւող անվերջ առաւելութիւնների ու ռուս իշխանաւորներին տրւող տեսանելի և անտեսանելի արտօնութիւնների,— ռուսաց լեզուն և ռուս սովորութիւնները (որոնցից շատերը դժւար թէ կարելի լինի ցանկալի համարել) տարէց տարի գրաւում են նոր շրջաններ, ձգում են աւելի և աւելի խոր արմատներ Կովկասում։ Դրա հետ միասին աղճատւում են մանր ազգութիւնների լեզուները, թուլանում, ոչնչանում են տեղական ազգային այն սովորութիւններն ու առանձնայատկութիւնները, որոնցով ոչ միայն միլիոնաւոր մարդիկ դարերի ընթացքում ապրել ու բաւարարութիւն են ստացել իրենց բոլոր նիւթական ու հոգեկան պահանջների համար, այլ որոնք նաև բնական զարգացման պայմանների մէջ իրենց ինքնուրոյնութեամբ գուցէ դասւէին մարդկային լաւագոյն ստեղծագործութիւնների շարքում...

Շնորհիւ ազգային (ոչ-ռուս) դպրոցների արգելման, շնորհիւ այն կապանքների, որ դրւում են մանր ազգութիւնների գրականութեան առջև, ոչ-ռուս երեխաների ուղեղը ենթարկւում է մի անբնական փոփոխութեան, նոր ձևի այլասերման։ Շատերը, մոռանալով մայրենի լեզուն, չեն կարողանում բացատրել իրենց մանկութեան ընկեր հարևանների, իրենց ծիծ տւող մայրերի հետ անգամ։

Միլիոնաւոր հայ, վրացի, թիւրք, լեզգի, պարսիկ, գիւղացի ու քաղաքացիներ մնում են խաւարի մէջ, զուր տեղը հայցելով օգնութիւն իրենց ցեղակից կրթւած անհատներից։ Բռնակալ բէժիմը մեռցրել է վերջիններիս մէջ սէրը դէպի իրենց ազգակիցները և նրանց պահանջները։ Բոլոր ազգերը „հաւասար" են սորա աչքում տեսականապէս, իսկ էապէս նա աւելի կապւած է իշխող ազգութեան հետ... Փոքր, ճնշւած ազգութիւնների միլիոնաւոր անդամները իրենք կարող են հոգալ իրենց մասին, ենթակայ ամէն տեսակ նախապաշարումների, ամէն տեսակ կեղեքումների՝ աւելի աչքաբաց հարևանների կողմից...

Այդ էլ բաւական չէ. Կովկասում տիրող նեխւած մթնոլորտը գցում է նրանց և բարոյապէս, համերաշխութեան ու սիրոյ զգացմունքի տեղ ներշնչելով նախանձ և ատելութիւն։

Հեռու կրօնների պաշտպանութեան մտքից կամ եղած կրօններից մէկին առաւելութիւն տալուց՝ մենք այնուամենայնիւ անկարող ենք աչքներս փակել իրականութեան վրայ և չխոստովանել, որ կրօնական զգացումը շատ ուժեղ է դեռ Կովկասի ազգութիւնների մէջ և կազմում է ամէն մէկի համար մի սրբութիւն։ Քանի որ դա այդպէս է, հասկանալի է թէ որքան զգոյշ պէտք է լինել այդ կէտի նկատմամբ. բայց անցնենք մեր կեանքին։

Արդարութեան ու բաւարարութեան ի՞նչ զգացմունք կարող է զարթել կովկասցի մահմէդականի մէջ, երբ նա տեսնում է թէ ինչպէս իր երկրում, իր վճարած տուրքերի գնով կառուցւում են հոյակապ տաճարներ, պահւում են օտար քահանաներ, փառաբանւում է ուրիշ կրօն, ուրիշ Աստւած։

Ի՞նչ զգացմունք, բացի ատելութիւնից ու վրէժխնդրութիւնից, կարող է ունենալ կախէթցի վրացին, շիրակեցի հայը, ծալկեցի յոյնը, լսելով սլավոն ժամասացութիւն Ս. Նունէի գերեզմանի, Լուսաւորչի մասունքների վրայ և համաշխարհային յունաց եկեղեցու կամարների տակ։

Կա՞յ արդեօք ծնողների համար աւելի ծանր վիրաւորանք քան այն, երբ ուղղափառ եկեղեցին հրամայում է ոստիկանի միջոցով, ռուսաց և միմիայն ռուսաց եկեղեցում մկրտել խառը ամուսնութիւնից ծնւած երեխային։

Կարելի՞ է արդեօք երևակայել աւելի մեծ անբարոյականութիւն, քան այն, որը բնականաբար արծարծւում է փոքր և մանաւանդ ոչ ռուսադաւան ազգութիւններին պատկանող թոյլ անձնաւորութիւնների մէջ, որոնք հող, պաշտօն ստանալու համար, կամ „իշխող", բարձր դասակարգի մէջ մտնելու տենչով, մի կողմ են գցում մայրենի լեզուն, սովորութիւնները և հաշւից դրդւած՝ փոխում, վաճառում են իրենց համոզմունքները, հայրենի կրօնն ու հաւատքը։

Դժւար է, կարծում ենք, երևակայել աւելի մեծ ողբերգութիւն, քան այն, որ կատարւում է ռուսադաւանութիւն ընդունած այն հայ գիւղացիների սրտերում, որոնք յաճախում են իրենց ծնողների, իրենց խսկական պաշտած սրբավայրերը միմիայն գաղտագողի ու մութ գիշերներով...

Ո՞ր բարեխիղճ մարդը այս պարագաներում կարող է անտես առնել ռուսաց ազգային գերիշխանութիւնից ծագած անսահման չարիքները և լռութեամբ անցնել ազի արցունքով լի այն բաժակի մօտից, որ խմում են ամէն օր Կովկասի մանր ազգութիւնները։

Ո՞ր տրամաբանօրէն մտածող մարդը կը համարձակի հերքել, որ մանր ազգութիւններին պատկանող տարրերը իրաւունք ունեն և պարտաւոր են պաշտպանել իրենց ազգային շահերը ամբողջ կազմով, պաշտպանել սիստեմատիկ կերպով, ամէն օր ու ամէն րոպէ, ինչպէս սիստեմատիկ և տևողական է այդ ազգութեան վրայ բրւնացող գերիշխանութիւնը։

Մի՞թէ նոյն բանը չենք տեսնում մենք և ուրիշ երկիրներում՝ Գերմանիա, Աւստրիա, Ունգարիա, ուր ճնշւած ու կեղեքւող լեհացիք, չեխերը, սլովակները, խորվատները, հարկադրւած՝ սիստէմատիկ տնտեսական ու կուլտուրական պաշտպանողական կռիւ են մղում ազգային մենաշնորհ վայելող պրուսացիների, աւստրիացիների, իտալացիների, ունգարների դէմ, դիմելով շատ անգամ այնպիսի բացառիկ միջոցների, որոնք նորմալ պայմաններում կը համարւէին արհեստական ու անբնական։

Մի՞թէ նոյն բանը չենք տեսնում մենք և բնութեան մէջ, ամբողջ կենդանի աշխարհում, ուր ամէն մի բոյս, ամէն մի ծիլ ձգտում է ունենալ իր նմանը, տենչում է գրաւած լինել երկրիս թէկուզ ամենաչնչին մասնիկը. ուր ամէն մի կենդանի, ամէն մի թռչուն, ամէն մի կեանքով օժտւած արարած պատասխանում է իր վրայ տեղացող հարւածներին, իսկ վտանգը աճելու դէպքում՝ ամէն

մինը միանում է իր նմանների հետ, իր անձի ու ցեղի պաշտպանութեան համար։

Ինքնապաշտպանութիւնը բնութեան ամենահիմնական օրէնքներից մէկն է։ Նա անհրաժեշտ պայման է բուսական և կենդանական տեսակների գոյութեան համար, դա այն հիմնաքարերից մէկն է, առանց որի կանգ կ'առնէր բնութեան զարգացումը, մարդկութեան առաջադիմութիւնը։

Կասկած չկայ, որ ռուս գերիշխանութեան տակ հեծող Կովկասի ազգութիւնները նոյնպէս բացառութիւն չեն կազմելու այդ օրէնքից, կանգնելու են հակակշիռ իրենց գլխին տեղացող հարուածներին և իրենց ազգային ամբողջ գոյութիւնն ու զարգացումը ապահովելու են իրենց կեանքի բացառիկ պայմաններին համապատասխան միջոցներով։

Անշուշտ, կը գտնուին անհատներ, նոյնիսկ խմբեր, որոնք կուրացած ֆրազների ու վերացական դատողութիւնների մշուշով, կամ պարզ երամական բնազդից՝ հետևել մեծ, թէկուզ տարբեր պայմաններ ունեցող երկրների հոսանքներին՝ կը համարեն այս պատճառաբանութիւնը սխալ, վնասակար։

Սակայն, վրացի, հայ և միւս ճնշուած ազգերի ստուար մեծամասնութիւնը Կովկասում, իր առողջ դատողութեամբ ու հոտառութեամբ աչքից չի թողնի իր բացառիկ կացութիւնը իբրև որոշ ազգի անդամի և կ'ըմբռնէ իրականութեան պահանջները։

Եւ ինչպէս անձնական, ընտանեկան, կօրպօրատիվ (դասակարգային) նեղ շահերը չեն արգելում նրան զբաղուել նաև աւելի լայն հարցերով, այնպէս էլ մօտ և հեռու ապագայում իրագործուելիք սահմանադրութեան, ազգային ինքնավարութեան, սոցիալական վերածնութեան ան հրաժեշտ բայց հեռաւոր նպատակները չեն խանգարելու նրան՝ հէնց այսօրուանից պաշտպանել ռուսաց ազգային-կառավարական մենաշնորհի տակ հեծող հայ, վրացի, թիւրք և այլ ազգութիւնների կեանքի ու առաջադիմութեան ամէն օր բռնաբարող անկապտելի իրաւունքները։ Այլապէս, — մինչև հեռաւոր արդար կարգերի իրականացումը, — ճնշելով, կեղեքելով աւելի ուժեղների կողմից՝ մանր ազգութիւնները կը թուլանան, կը լքուին, կը մարին։

Միմիայն այս ճշմարտութեան քաջ գիտակցութիւնը կարող է ապահովել Կովկասի բոլոր ազգութիւնների գոյութիւնը և անսայթաք ու զուգընթաց առաջադիմութիւնը։

Միմիայն այս ճշմարտութեամբ լուսաբանուած ուղղութիւնը պիտի լինի վրացի, հայ և բոլոր ճնշուած մանր ազգութիւնների նշանաբանը՝ թէ երկարատև, խաղաղ և թէ փոթորկալից կռուի ընթացքում։

(Կը շարունակուի)

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Գալիցին զառանցանքի մէջ.— Տէոօրական նոր գործողութիւններ.— Կանչելին պաշտօնանկ. — Խստութիւններ։

Թիֆլիս, 20 դեկտեմբեր 1903

Մեր դահիճները այժմ իրենց շաբից էլ վախենում են։ Կովկասի ամենազօր բռնակալ Գալիցին գիշեր ու ցերեկ քունը կտրած՝ ամէն տեղ հայ տէռօրիստի ստուերն է տեսնում։ Իր փոխանորդ գեներալ Ֆրեզէյի հետ նա այժմ ողբերգական մի կատակերգութեան ներկայացումն է տալիս Թիֆլիսի բնակիչներին. հարիւրաւոր զինուորներ՝ ինժեներների ու օֆիցերների ղեկավարութեամբ եռանդով փորում են պալատի շուրջը և ուշի ուշով հետազօտում են հողը, մի գուցէ այնտեղ թաղցրուած լինին բռնկուող նիւթեր... Խելագարը, ասում են, գիշերը ինչ որ ճարճատիւն է լսել պալատի տակ և ինչ որ սպառնական նամակներ է ստացել... Ոչինչ չեն գտնում և կառավարութիւնը միայն ծաղրի առարկայ է դառնում։ Նա հրամայել է փորուածքի գծով մի անցք շինել պալատի շուրջը, ուր զինուորները պիտի հսկեն շարունակ, որպէս զի հանգիստ քնէ կառավարչապետը. ապա թէ ոչ „վախկոտ" հայերը, „մի գունդ միս" ներկայացնող հայերը—այդպէս է Գալիցինը անուանել հայերին կայսրի առաջ—կարող են մի գեղեցիկ օր օդը ցնդեցնել կովկասեան ամենազօր հրամանատարի պալատը...

Գաւառներից ևս մեզ հասնում են սրտապնդող լուրեր։

ԳԱՆՁԱԿՈՒՄ, դեկտեմբերի 7-ին տէռօրի է ենթարկուել մի գաղտնի ոստիկան։

ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ սպանուել է էլի մի ոստիկան։ Տէռօրիստները ազատ են։

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼՈՒՄ սպանուել է կարսեցի մատնիչ ձիաւոր Պետրոսը։

Սպանութեան փորձ եղաւ, դժբախտաբար անաջող, Կարսի ոստիկանապետ Խերխուլիձէի վրայ. ծանր վիրաւորուեց նրան ընկերացած ոստիկան Գուսգիէվ. գնդակներից մինը ծակեց նրա կուրծքը։

* * *

Էջմիածնի սինոդի տխրահռչակ պրօկուրօր Կանչելի պաշտօնանկ եղաւ։ Նրան զրկեցին մինչև իսկ պաշտօնական համազգեստից ու թաշակից։ Ի՞նչ հանելուկ է այս... առայժմ անըմբռնելի է։

ԿԱՐՍԻ շրջանում կառավարչական մի նոր ցանձնաժողով՝ բազմաթիւ զինուորներով շրջում է և աշխատում երեսփոխների ու հոգաբարձուների ստորագրութիւնները հաւաքել, որով պարզէր, թէ իբր հայերը իրենց յօժար կամքով են յանձնում եկեղեցական գոյքերը։

* * *

Ռէակցիան՝ խելակորոյս հարուածում է աջ ու ձախ։ Ամէն օր նոր խստութիւններ։ Հայ ազգաբնակութեան վրայ սարսափ ձգելու նպատակով՝ բանտարկում՝ ու աքսորում են բազմաթիւ հայեր հասարակութեան բոլոր խաւերից։ Աքսորուած են առայժմ՝ Բագուից 15 հոգի, Երևանից՝ 23, Թիֆլիսից 7, Կարսից՝ 12. ուրիշ տեղերից աքսորուածների թիւը դեռ չգիտենք։

Թիֆլիսում բանտարկուածների թիւումն են՝ „Նոր դար"-ի խմբագիր Սպանդարեան, նրա մշտական աշխատակից Յովհ. Մալխասեան („Նոր դարի"-ի հրատարակութիւնը այդ պատճառով դադարած է), բժշկապետ Նաւասարդեան, Ստեփան Զօրեան, ուսանող Ստեփանեան։

* * *

Հայկական Ինքնապաշտպանութեան Կ. Կոմիտէն նոր թռուցիկներով մերկացնում է կառավարութեան արարքները և կուռ յորդոր է կարդում հայ ժողովրդին։

ՍԱՐԱՖՕՎԻ ՆԱՄԱԿԸ

Մակեդոնական շարժման պարագլուխ Բ օ ր ի ս Ս ա ր ա ֆ օ վ, որ Մակեդոնիայում իր ձեռքով վարած փայլուն կռիւներից յետոյ, գրեթէ հրաշքով ազատուեց ապըստամբութեան թատրից, իր ընկեր և զինակից Դերջիկովի հետ անցաւ Եւրոպա՝ շշափելու համար քաղաքական շրջանների տրամադրութիւնները և տեսնելու մակեդոնական դատի ականաւոր պաշտպանների հետ։ Նա այցելեց Վիէննա, Պարիզ, Լոնդոն, Ժընէվ, Հռովմ։ Պարիզ եղած միջոցին՝ Սարաֆօվ հետևեալ նամակը հրատարակել տուեց „Պրօ Արմէնիա"-ի մէջ, ուղղուած՝

Հ ա յ ը ն կ ե ր ն ե ր ի ն

Պարիզ, 29 դեկտ. 1903 թ.

Խորապէս զգացուած այն շնորհաւորութիւններից ու ջերմ համակրութիւններից, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը արտայայտեց ինձ Մակեդոնիայից իմ վերադարձիս, ինձ չափազանց հաճելի է օգտուել այդ առիթից եւ մի քանի խօսք ուղղել Ձեզ „Պրօ Արմէնիա"-ի միջոցով, որ այնքան իրաւամբ յարգուած է մարդասիրական մի դատի իր ստանձնած պաշտպանութեան համար։

Հ ա յ ը ն կ ե ր ն ե ր

Սրտանց շնորհակալութիւն յայտնելով Ձեզ՝ Ձեր բարեմաղթութիւնների ու ջերմ համակրանքի համար, ես մի անգամ եւս խնդրում եմ ընդունել մակեդոնացիների կողմից եղբայրական համերաշխութեան մեր անխախտ հաւատիքները։

Այդ համերաշխութիւնը հայերի եւ մակեդոնացիների մէջ մենք արտայայտեցինք արդէն Եւրոպայի առջեւ 1899-ին, երբ ներկայացրինք հաւաքական մի յայտարարագիր Լահէի խորհրդաժողովին։

Այդ համերաշխութիւնը հայերի եւ մակեդոնացիների մէջ մենք չեշտեցինք ընդհանուր գործակցութեամբ Համիդեան լծի դէմ, որ մենք կրում ենք միասին։

Ցուսանք, հայ եղբայրներ, որ առաջիկայ դարնան այդ եղբայրական համերաշխութիւնը պիտի յաղթանակէ ընդհանուր ու կերպոյն մի գործակցութեամբ, որը կը տապալէ բռնակալին եւ կը հարկադրէ Եւրոպային ի կատար ածել մարդասիրական այն առաքելութիւնը, որ նա ստանձնել է, ստորագրելով Բերլինի դաշնագրի 23-րդ եւ 61-րդ յօդուածները։

Ցուսանք, որ այդ միրկարար գործակցութիւնը կը փշրէ շղթաները երկար դարերից ի վեր մարտիրոսացուած՝ երկու ազգերի։

Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Մակեդոնիա, կեցցէ՛ մարդկային համերաշխութիւնը։

ԲՕՐԻՍ ՍԱՐԱՖՕՎ

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻԺ

Տարօնի կենտ. կոմիտէի որոշումով՝ անցեալ նոյեմբերի 14-ին խնուսի մէջ տէռօրի է ենթարկուած խնուսցի Տ ի գ ր ա ն Գ ե ո ր գ ե ա ն, իբրև դաւաճան։

Նա յայտնի էր յեղափոխական շրջաններում „Ազբայէլ" կեղծ անուան տակ։ 1896 թուին երդուել էր ծառայել հայ յեղափոխական դատին, բայց շուտով դաւաճանեց իր խօսքին։ Հրապուրելով մեր դահիճների ոսկիներով, նա դարձաւ լրտես, մտաւ ոստիկանութեան ծառայութեան մէջ և ուղղութիւն ու փաստեր էր տալիս կառավարութեանը իր նախկին ընկեր Արամ՝ Արամեանի գործի քննութեան միջոցին, որը և հասցրեց վերջինիս կախաղան... Դաւաճանութեամբ ստորագրած լինելով իր մահուան դատավճիռը, Ազբայէլ փոխում էր միշտ իր պաշտօնավարութեան կէտերը, յուսալով, թերևս, որ ժամանակը մոռացութեան կըտայ իր սև գործերը։ Բարեբախտաբար դեռ ևս չէ մարած հայի պատասխրութեան զգացմունքը, դեռ շողում է հայ տէռօրիստի վրէժխնդիր աչքերը։

Դաւաճանը ստացաւ իր արժանի պատիժը,—վաղաժամ կորած ընկերների ոսկորները կարող են հանգչել գերեզմանի մէջ...

* * *

Մեզ հաղորդում են Կարինից (դեկտ. 2), որ Բասենի կռուի միջոցին գերի ընկածներից մէկը՝ Առաքել Մկրտեան վախճանուած է քաղաքի բանտում և թաղուած մեծ շուքով։

* * *

Բաթումից մեզ հաղորդում են, որ սրանից մի քանի ամիս առաջ Արդվինում բանտարկուած 40 հոգին (որոնց մէջ է և Դարմշատի ուսանող Գէորգ Տէր-Աբրահամեան) ազատուած են բանտից։

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ամերիկայի Բրիջպօրտ քաղաքից՝ Բոյաջեանից 20. 60 ֆր.։ Վիեննայից Ա. Գ. 7 ֆր. Բրոշիւրների ու պատկերների վաճառումից 17 ֆր.։

Բուլգարիայի Սլիվէն քաղաքից՝ Խաչ. Յովհ. 40 ֆր., Տ. Արաքել 5 ֆր.։ Ռումանիայի Բրաիլա քաղաքից Ս. Բոլ. 35 ֆր.։ Ոսկանապատի „Դրամ" խմբից երկու անգամ ղրկուած՝ 6000 ֆրանք։

Ընդհանուր գումար 6124 ֆրանք 60 սանտիմ։

ՎՐԻՊԱԿ.—Նախորդ համարում Արեւմտեան բիւրօյի հաշուի մէջ տպուած էր՝ Փիլիպպէի „Աստղիկ" խմբից 50 ֆր., պէտք է լինի՝ „Աստղիկ" խմբի ձեռամբ ստաց. 50 լէվ ոսկի՝ ընկերական երեկոյթէ մը։

ԱՄԵՐԻԿԱՅԻ կեդր. կոմիտէն՝

ՓԻԼԱՏԷԼՓԻԱՅԻ Կոմիտէին ձեռամբ, 1901-ի հաշուէն.

Կ. Օ. 13. 50 դոլար, Բ. Ե. 7. 50, Թ. Փ. 7. 50, Ց. Ն. 6. 50, Դ. Ղ. 1. 50, Ա. Ե., Ա. Ց., Գ. Ե., Ց. Գ., Գ. Հ., Ս. Ց., Պ. Մ. 25-ական սենթ։ Այլեւայլ հասոյթներէ 4. 87 դոլար։ Գումար 43 դոլար 12 սենտ։

1902-ի հաշուէն.

Կ. Օ. 108. 50 դոլար, Հ. Բ. 50, Յ. Ն. 28, Թ. Փ. 23, Պն եւ Տիկ. Կ. 20, Բ. Ե. 18, Մ. Գ. 12. 50, Բ. Բ. 12, Տիկ. Մ. Թ-եան եւ Ի-եան, Ա. Զ., Տիկ. Ն. 10-ական, Գ. Թ. ու եղբ. 9. 75, Դ. Ղ. 8, Մ. Ի. 7. 75, Ն. Ց. եւ եղբ. 7. 75, Ա. Ե. 5. 25, եղբայրք Է., Տիկ. Զ., Ա. Ա., Ս. Ս., Տիկ. Կ. 5-ական, Ց. Խ. 4. 50, Պ. Մ. 3. 75, Ա. Շ., Գ. Մ., Խ. Տ. 2. 75-ական, Մ. Շ. 2. 50, Գ. Մ. 2. 25, Ց. Պ., Փ. Ա., Դ. Շ., Ն. Փ., Ս. Մ., Տիկ. Փ., Ոմն 2-ական, Գ. Ա. 1. 75, Ե. Ա. 1. 50, Մ. Մ. 1. 50, Գ. Ժ. եւ Հորս Անծինք մէյ-մէկ, Ս. Շ. 25 սենտ։ Այլեւայլ հասոյթներէ 1. 87, Ընկեր Կ. Օ-ի պսակի առթիւ 52. 50 դոլար։ Գումար 475 դոլար 12 սենտ։ Ընդհանուր գումար 518 դոլար 24 սենտ։

Քանքըրտի Կոմիտէին ձեռամբ 1902-ի հաշուէն.

Ց. Ն. 35. 20 դոլար, Հ. Պ. Ե. 35, Գ. Դ. 38, Ց. Ռ. 27. 20, Ա. Ն. 20, հաւակիրներէ 32. 60 դոլար։ Գումար 178 դոլար։

Նիւպրիփորթի Կոմիտէին ձեռամբ 1902-ի հաշուէն.

Ա. Ռ. 36 դոլար, Վրէժ 31, Գ. Պ. 26, Ա. Խ. 12. 50, Ա. Տ. 12. 50 Փ. Տ. Օ. 2, հաւակիրներէ 24 դոլար։ Գումար 145 դոլար։

Թրոյի Կոմիտէին ձեռամբ 1903-ի հաշուէն.

Սանիմ, Հարւած, Վարդան, Վազգէն, Առիւծ 10-ական դոլար, Թափառական, Գուրգէն Գայլ Վահան, Ամազոն, Փարհատ 5-ական, Մկրտչ 3, Զաւէն, Մարթին 2-ական, Յեսու, Արտաշէս մէյմէկ, ամսավճարներէ եւ ուրիշ աղբիւրներէ 32. 62 Գումար 121 դոլ. 62 ս.։ Ընդհանուր գումար 962 դոլար 86 սենտ։

ՎՐԷԺԻ կեդր. կոմիտէն՝

Մինաբէթից՝ Եղ. Ս. Ա. 500 դրամ, Որ. Բ. Զ. 250, Եղ.

Ս. Շ. 200, Եղ. Գ. Հ. 200, Որ. Մ. Հ. 100, Ն. Ա. 100, Կ. Տ. Ա. 75, Տնղացի 100, Ա. Ց. 40, Ն. Հ. 40, Ոմն 150, Անծանօթ 20, Որ. Բ. Ա. 200, Բէգից 200, Ց. Մ. 25, Արմենական կազմալուծեալ խմբից 30, Զ. 20, օր. Արփենիկ 20, „Զօլա“ խմբի 6 ամսեայ անդամավճար 200, „Կաբօ“ խմբի 2 ամսեայ անդամավճար 40, „Դերիկ“ խմբի 2 ամսեայ անդամավճար 22 դրան: Գումար 2532 դրան:

ԳԱՀԻՐԷԻ Կոմիտէն՝

1903 թի մայիսէն դեկտեմբեր՝ Ենթակոմիտէի կազմակերպած վիճակահանութեան զուտ արդիւնք 2256. 50 դուրուշ ողջ, Ա. Էվլիանի որդւոյն մկրտութեան հանդէսին հանգանակւած 350, Գորիւն խումբի անդամավճար 260, նոյն խումբէն Աշոտ-Երկաթի կազմակերպած վիճակահանութեան զուտ արդիւնք 227, Բաֆֆի խումբի անդամավճար 149, նոյն խումբին միջոցաւ Ց. Թաթոսեան 12. 50, Ա. Հնգապապեան, տիկին Ա. Աւետիսեան, Ժ. Թաթոսեան, Անտոն 10-ական, Վ. Թաթէոսեան, Ե. Բամպուրջեան, Ա. Յովսէփ, Ծիածան 5-ական, Միհրդատ խումբէն 30, նոյն խումբին միջոցաւ Աշոտ 15, Մ. Իշլէմէճի, ապրիլ 15, Սմբատ 10-ական, Գ. Գալֆայեան 8, Պարոյր, Մարդ 5-ական, Սիմնի խումբէն 70, Անահիտ 90:

Մինիէէն՝ Ծիրայր 97. 50 դուրուշ ողջ:

Համագումար 3665. 50 դուրուշ ողջ:

ԲԱՐԶՐԱՎԱՆԴԱԿԻ Պատ. կեդր. Կոմիտէն՝

Սալնոյ Զորի Կեդր. Կոմիտէի միջոցաւ տուզանք Ն... երէ 389 դահեկան, տուզանք Ծովափէն 200, տուզանք Խուզէն 832, տուզանք Ն... երէ 200, եւս 200, եւս 100, Նէր Բզնունեաց Սամարիայ գիւղից 108, Ապառաժ գիւղից 50, Ապահունեաց Բուրատան գիւղից 300, օգնութիւն վտանգւած ընկերոջ Շուշակաշէ գիւղի խմբից 200, Գոմոր գիւղի խմբից 220, Զրաւան գիւղի խմբից 160, Քար գ.-ի խմբից 80, Սոդոմ գ.-ի խմբից 50, [illegible]-ից 200 դահեկան: Գումար 3289 դահեկան:

ՄՐԳԱՍՑԱՆԻ ԿԵԴՐ. Կոմիտէն՝

1. Քաղաքի շրջան

1902 թ. սեպտեմբերից մինչեւ 1903 թ. սեպտեմբերի 15-ի մուտքը. — Օր. Մ-սարեանի պարահանդէսից 36 ռ. 25 կոպ., վիճակախաղից 3, օրիորդների խմբի վիճակախաղից 55, օր. „Զարուհի Դերոյեան“ խմբի երեկոյթից 100, նոյն խմբի Զան-գիւլումից 25. 77, նոյն խմբի անդամավճար 32. 85, Աշակերտական միութիւնից 100, Ալագեազ խմբի „Աւետիսից“ 90. 10, Վաճառականների ա. խմբի անդամավճ. 29, Վաճառականների բ. խմբի անդամավճ. 83, Համերգից 140. 60, Գործակատարների ա. խմբի անդամավճ. 20, Գործակատարների բ. խմբի անդամավճ. 62, Ներկայացումից 19. 67, Քաջերունի խմբ. 32, Արհեստաւորների խմբ. 50. 4, Նկարներից 83. 56, Հացկերոյթից 74. 30, Անկախ խմբ. 7. 85, Երկաթ խմբ. 35. 70, Թերթով հանգանակած 38. 60, Փունջ խմբ. 21, Ծաղկախումբ 7. 50, Սերոբ խմբ. 6. 90, Հացկերոյթից 43. 48, Երազ խմբ. 47. 61, Վազգէն խմբ. 9, Հացկերոյթից 5. 16, Սլաք խմբ. 16, Վիճակախաղից 20. 10, Հեղեղ խմբ. 19. 20, Հացկերոյթից 90, Ինտէլիգէնտ խմբ. 30, Աղասի խմբ. 30, Քաղաքամասի խմբ. 103. 60, „Աւետիսից“ 29. 15, Ներկայացումից 91. 15, Բուֆէտից 152. 54, Նէր Մնացական Լօթուց 20, Նէր Լաստից 10, Նէր Սոկրատից 1200, Նէր Տէրեանից 1500, բժ. Սարեանի հանգանակած 29. 39, Երկաթի ատրճանակից 20, Բաց նամակներից 6. 80 ռուբլի: Գումար 4628 ռուբլի 14 կոպէկ:

2. Արարատի շրջան

Նէր տիկիններից 45 ռուբլի, ապառիկ մնացած 1902 թ. 58: Հետեւեալ խմբերից՝ Տիգրիս 5, Ջալաղ 5, Վահ. Խ. Փ. 6. 60, Փայլակ 3. 75, Արաքս 6. 25, Վրէժ 3. 75, Բարդող 7. 50, Աշտիշատ 4, Դար 7. 20, Ծաղիկ 5, Զինւոր 3. 75, Սիփան 3. 75, Ցոյս 7. 50, Արհեստ 7. 50, Միութիւն 10, Արշարունի 6, Ծաղիկ Սասնոյ 5, Պարտէզ 15, Սիս 4, Մտրակ 3, Բուսիկ 5, Արիասիրտ 4, Թաթուլ 4, Արիաշան 4, Որսորդ 3. 75, Աշխոյժ 4, Ղորղան 5, Քարաղար 9, Ոխ 3. 75, Դաշոյն 3, Մշակ 5, Զեփիւռ 3, Բուլք 3, Արծիւ 6, Կոկոն 6: Հողակոյտ գիւղի խմբերից՝ Վրան 5, Օգնական 5, Մասիս 10, Արծիւ 10, Հրաբուղխ 3. 50, Պլատին 2. 50: Կորիզ եւ Եզր գիւղերի խմբերից՝ Աղբիւր 6, Որսորդ 10, Միութիւն 30, Պարտէզ 27, Դաշոյն 6, Զաւակ 5, Ցոյս 15, Ծաղիկ 10, Ծաղիկ Սասնոյ 10, Զեփիւռ 5, Թաթուլ 8, Մտրակ 6, Բարդող 15, Արհեստաւոր 10: Ապառաժ գիւղի խմբերից՝ Բուսիկ 5, Քարաղար 18, Ղորղան 5, Աշխոյժ 8, Ցոլակ 8, Թափանցիկ 4 ռուբլի: Գումար 538 ռուբլի 5 կոպէկ:

3. Արմաւիրի շրջան

Հետեւեալ խմբերից՝ Անկախ 24 ռուբլի, Ալէկոծ 65. 30, Նորուժ 11, Դա-է-վրէժ 18. 80, Արա 5, Արամայիս 12. 50, Կոկոն 2. 30, Առիւծ 3. 40, Արմաւիր 6, Թաթուլ 12, Առնաուտ 4. 20, Արմաւիր, Թաթուլ, Առնաուտ խմբերից 26. 10, Հարսանիքից հանգանակւած, Պօղոսի միջոցով՝ 27. 61, Հաւօյի միջոցով՝ 15. 50 ռուբլի: Գումար 233. 71 ռուբլի:

4. Քասախի շրջան

Կարմիր Քարի խմբի „Աւետիսից“ 100 ռուբլի, Խթան-Քաջքերունի խմբ. 21. 65 ռուբլի: Գումար 121. 65 ռուբլի:

5. Բարձր-Տեղի շրջան

Հետեւեալ խմբերից՝ Ոսկէհանք 25. 80, Հազարեակ-Հարիւրեակ 7. 10, Գժաբոյժ 10, Հազարեակ 15՝ Բարձր-տեղ 254. 20, Վիճակախաղից 13, Զորից 52 ռուբլի: Գումար 377. 10 ռուբլի:

6. Նիգի շրջան

Հետեւեալ խմբերից՝ Առիւծ 9 ռուբլի, Ախուրեան 12, Շիշ-կալայ 4, Ծիլ-Պալ 6, Արծիւ 8. 10, Երէց 8. 70, Քարաբերդ 20. 80 ռ.: Գումար 67. 60 ռուբլի:

7. Ծաղկաձորի շրջան

Ծաղկաձորի խմբ. 87 ռ., Տան խմբերից 24. 45, Ռաման խ. 10 ռուբլի: Գումար 71. 45 ռուբլի:

8. Զրաբաշխի շրջան

Հետեւեալ խմբերից՝ Աւդալի Մեծոտ 21. 5 ռ., Վազգ 21. 45, Զարմայր 26. 20, Առիւծ 29. 85, Հրազդանի ա. բ. գ. խմբ. 14 60, Կայծակ 4. 15, Քաջ 2. 30, Ազատ 3. 25, Արարատ 3. 25, Արամայիս 6. 75, Արաքս 4. 40, Միքօ 4. 15, Ամրոց 1. 20, Օվայիս 3. 5. Հացկերոյթից 37. 80, № 30 թերթով հանգանակւած 24. 85 ռ.: Գումար 208. 30 ռուբլի:

9. Ազատ Գետի շրջան

Հետեւեալ խմբերից՝ Վարդենի 19 ռուբլի (№ 5 թերթով), Առատ գետ 30. 50, Մարմար 8. 50, Ծաղկախմբից 20, Արաքս 4. 70, Աղբիւր 8, Վարդենի 8 ռուբլի: Գումար 98. 70 ռուբլի:

10. Ազատ Դաշտի շրջան

Վարչութիւնից 651. 37 ռուբլի, „Աւետիսից“ 50: Հետեւեալ խմբերից՝ Ուխտ 10, Պտղատու պարտէզ 116. 80, Ազնիւ 50. 65, Վարազ 34. 10, Տարափ եւ Հարօս 22. 80, Բարձր 11. 75 ռուբլի: Գումար 947. 47 ռուբլի:

11. Տրտում Գետի շրջան

Սրընթաց խ. 9. 85, Ցողուն 13. 35, Տրտում 13. 95, Սլաք 9. 90, Արշալոյս 8. 60 ռուբլի: Գումար 55. 65 ռուբլի:

12. Արփա-Չայի շրջան

Թերթով հանգանակած 70 ռուբլի, անդամավճար 118: Գումար 188 ռուբլի:

13. Նոյեան-Տապանի շրջան

Թերթով հանգանակւած 57. 15 ռուբլի, № 16-ի թերթով հանգանակւած 89, թերթով հանգանակւած 52. 30, Նէր Ափի Զան-Ցակոբից 25: Հետեւեալ խմբերից՝ Տապան 17. 20, Սերոբ 6. 45, Վրէժ 11. 40, Իլանդաղ 20, Մազնիտ 16. 30, Արաքս 14. 85, Գրաւիշ 20, Արծիւ 15, Միջակէտ 11. 20, Տապան 17. 20, Սերոբ 6. 50, Իլանդաղ 12. 60, Մազնիտ 35, Արաքս 4. 50, Գրաւիշ 20, Արծիւ 11 ռ.: Գումար 461. 65 ռուբլի:

14. Հովիտի շրջան

Աստղ խմբից 18 ռուբլի, երեկոյթներից 112, Լիճ քաղաքի ներկայացումից 44. 45, Գաո-բաշ գիւղի Գաոնիկ խմբ. 21. 10 ռ.: Գումար 21. 10 ռուբլի:

Ընդհանուր գումար 8193 ռուբլի 12 կոպէկ:

ԱՋԴ

Հատով „Դրօշակ“ ստացողներիս խնդրում ենք վերանորոգել իրենց հասցէները:

Այն բոլոր անձանց, որոնք չեն կրկնել իրենց պահանջը „Դրօշակ“ ստանալու մասին, Ցունւարից սկսած չպիտի ուղարկւի թերթը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ԴՐՕՇԱԿ“Ի

Խմբագրութեան դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du „Droschak“, Genève (Suisse)